ISSN 1829-0469
ISSN 2579-2687

ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՅԻ ԱՄՍԱԹԵՐԹ

ԵՐԱԺԻՇՏ

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա
Yerevan Komitas State Conservatory
Ереванская государственная консерватория им.Комитаса

Լույս է տեսել ISSN 1829-0469 թղթային տարբերակը 2005թ. դեկտեմբերի 25-ից (230)

#2 փետրվար 2025

ՇԵՆՈՐՀԱՎԵՏ

«ԵՐԱԺԻՇՏ»-Ը 20 ՏԱՐԵԿԱՆ Է ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ «ԵՊԿ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ 21-ՐԴ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ

ԵՊԿ հրատարակչություն. Գոհար Հովհաննիսյան (դիզայներ) Արմինե Աթոյան («Երաժիշտ» ամսաթերթի գլխավոր խմբագիր) հյուրեր՝ Անա Թորոսյան, Աշխեն Առուսպայան, Հռիփսիմե Մկրտչյան (ռուսերեն տեքստ. խմբագիր 2008-2009 թթ.) Ռուզաննա Անանյան (երգչուհի, Ավստրիա, Վիեննա), Գոհար Շագոյան (հրատարակչության հիմնադիր-ղեկավար, գլխավոր խմբագիր), Առնո Բաբաջանյանի անվան համերգասրահ, 6.02.2025 թ. ԵՊԿ Հրատարակչության Շնորհանդեսին, «Երաժիշտ» ամսաթերթի 20-ամյա հոբելյանը

2

ԳՈՀԱՐ ԳԱՍՊԱՐՅԱՆ – 100

4

Կոմիտասի թանգարան-ինստիտուտը նշում է հիմնադրման 10-ամյակը

Տաթևիկ Շախկույան

8

«ԵՐԵՎԱՆՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

Անա Արևշատյան, Միեր Նավոյան, Լիլիթ Երնջակյան, Շվեյցարիա

9

ԳԱԳԻԿ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 28-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՄԵՐԳ

6

«ԵՐԱԺԻՇՏ»ԱՄՍԱԹԵՐԹԸ 20 ՏԱՐԵԿԱՆ Է

ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ «ԵՊԿ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ 21-ՐԴ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ

1

Երաժշտական հանրությունը յուրաքանչյուր տարի համախմբվում է «ԵՊԿ հրատարակչության» հիմնադրման օրը, հրատարակչության աշխատակիցների կազմակերպիչ, հրատարակիչ Գոհար Շագոյանի ղեկավարությամբ հեղինակների և հյուրերի հետ միասին նշելու տարվա ընթացքում լույս տեսած նոր գրքերը, նոտային գրականությունը, ամսագրերի հերթական համարները, որոնք լուսաբանում են տարվա հոբելյանները կամ նշանակալի իրադարձությունները:

«Երաժիշտ» ամսաթերթի 20-ամյա հոբելյանն այս շնորհանդեսի կարևորագույն իրադարձությունն էր: Նախ հրատարակչության պատմության էջերից հիշենք.

«Երաժիշտ» ամսաթերթի ստեղծումից հետո, հրատարակչության շնորհանդեսը կատարեցինք ոչ թե հունվարի 28-ին, ինչպես որ ավանդաբար հմինադրման օրն ենք նշել, այլև փետրվարի 6-ին: 2006 թվականի այդ օրը, երբ Սրբազան Տ. Նավասարդ արքեպս. Կճոյանը, (այն ժամանակ Գերաշնորհը եպիսկոպոս էր դեռ) իր օրհնությունը բերեց մեր համեստ ԵՊԿ հրատարակչության 1-ին հարկում տեղակայված 103-րդ սենյակում: Ամսաթերթի 1-ին համարը 2005-ի դեկտեմբերի 25-ին էինք հրատարակել և 2-րդ՝ համարն էլ առկա և կատարեցինք նաև նորաստեղծ «Երաժիշտ» ամսաթերթի գինեձոնը: Պահպանելով այդ ավանդույթն այս տարի նամակ հղելով Սրբազանին խնդրեցինք, որ հենց այդ նույն օրն օրհնությունը կատարվեր՝ 20 տարի հետո և այդպես էլ եղավ: Սրբազանին մաղթենք առողջություն, և շնորհակալություն ենք հայտնում, որ Տ. Շահե քահանա Հայրապետյանին ուղղորդեց մեր ուրախությանը մասնակցելու, այս անգամ ոչ թե Կոնսերվատորիայում, այլ Առնո Բաբաջանյանի համերգասրահի 1-ին հարկի հյուրընկալ դահլիճում, տաղանդավոր դաշնակահար և այժմ մենեջմենթ դասընթացի ԵՊԿ դասախոս Արմեն Մանասյանին, որտեղ էլ անցավ մեր այս տարվա շնորհանդեսը:

«Պետք է շնորհակալություն հայտնենք Տ. Շահե քահանա Հայրապետյանին, որ «ԵՊԿ հրատարակչության» մեր պաշտոնական նամակին Արարատյանի Առաջնորդական Հայրապետական թեմին Սրբազանին 2007 թվականին իր անմիջական մասնակցությունը բերեց Մեծն Կոմիտասի հոգեհանգիստը կատարելու և պարզվեց, որ այս երկար ու ձիգ տարիների ընթացքում դա առաջին հոգեհանգիստն էր, որ Կոմիտասի գերզմանին կատարվեց և կնվիրվեց: Այդ մասին ցուցադրեցինք ֆիլմը, որ ժամանակին նկարահանել էինք, և նաև նամակով պաշտոնապես մեր շնորհակալությունը հայտնել Տ. Նավասարդ Սրբազանին»: Այս մասին նշեց Գ.Կ.Շագոյանն իր խոսքում և ցուցադրեց այդ հատվածը ֆիլմից: Տ. Շահե քհն. Հայրապետյանն այնուհետև իր օրհնությունը բերեց և աղոթեց՝ *«զԳործս ձեռաց մերոց...»*

Գ.Կ. Շագոյանը հավելեց նաև արտերկրից ստացած շնորհավորանքները և հատկապես Փարիզից ԺԱՖ-ի ներկայացուցիչ պարոն Ներսես Կարյանցի ներկայությամբ և նրա կողմից բերված Միսակ Մանուշյանի կազմակերպության «Արագած» ամսաթերթի խմբագիր Անահիտ Շամիկյանի ուղարկած՝ արդեն լույս ընծայած Օրացույցները, հայկական թեմատիկ ընդգրկումներով, որոնք արդեն զարդարել են մեր հրատարակչությունը և Միսակ Մանուշյանի խմբի՝ 1949-2019-ին 70-ամյա հոբելյանին նվիրված պատկերազարդ ալբոմը, որին առանձին կանդրադառնանք մեր ամսաթերթի համարներում (անպայման հայերեն լեզվով, քանի որ բոլոր հրապարակումները ֆրանսերենով են): Կրկին անգամ շնորհակալություն Միսակ Մանուշյանի անվան կազմակերպությանը և շնորհավորանքներին:

Բերում ենք երաժշտագետ, «Երաժիշտ» ամսաթերթի գլխավոր խմբագիր Արմինե Աթոյանի ելույթը շնորհանդեսին:

«Երաժիշտ» ամսաթերթը փոնում է իր 20-ամյակը: Այս տարիների ընթացքում մասնագիտական միակ թերթի տեսքով մամուլն անցել է բուռն և հերաթրթիր ուղի: Այն ունեցել է 6 գլխավոր խմբագիրներ, որոնցից առաջինը եղել է երաժշտագետ Աննա Գևորգյանը, ով թերթում ընդգրկեց «Երևանյան հայտարարություններ» (մտահղացումը՝ Գ.Շագոյանի) և «Գեղադիտակ» խորագրերով բաժինները, որոնք պահպանել ենք մինչ օրս: Այնուհետև երաժշտագետ, կոմպոզիտոր Տաթև Ամիրյանը, ում աշխատելու տարիներին էր, որ ես կատարեցի առաջին քայլերս հրապարակախոսության ասպարեզում, հենց «Երաժիշտ» ամսաթերթում: Այդ ժամանակ կոնսերվատորիայի 2-րդ կուրսում էի սովորում: Երրորդ գլխավոր խմբագիր երաժշտագետ Հասմիկ Համբարյանի գործունեության ժամանակ թերթը դարձավ ավելի ընդգրկուն, շարունակելով զարգանալ հաջորդ գլխավոր խմբագրի՝ երաժշտագետ Շուշան Այվազյանի, այնուհետև ինձ մեկ և կես տարի փոխարինած երաժշտագետ Մարգարիտա Կիրակոսյանի ժամանակ: Նախկին բոլոր գլխավոր խմբագիրներն էլ իրենց արժեքավոր ներդրումն են ունեցել թերթի կայացման ու զարգացման գործում:

Ես, որպես ամսաթերթի գլխավոր խմբագիր հրատարակչությունում աշխատում եմ 2014 թվականից, ընդմիջումներով մոտավորապես 7 տարի: Այդ յոթ տարիներն ինձ համար եղել են ինքնաբացահայտման, մասնագիտական ինչպես նաև անձի կայացման, երաժշտական բուռն աշխարհին առավել խորքային ճանաչելու, անվանի երաժիշտների, մանկավարժների, մշակութային գործիչների հետ ստեղծագործական կապեր հաստատելու տարիներ: Շատ ուրախ եմ, որ պատիվ ունեմ աշխատելու սիրելի Գոհար Շագոյանի ղեկավարությամբ և նրանից գիտելիքներով հարստանալով ոչ միայն խմբագրական գործի այլև երաժշտագիտության մասնագիտացումներում: Աշխատակցում եմ ռուսերենի խմբագիր, կոմպոզիտոր Սոֆա Ազնաուրյանի, դիզայներ Գոհար Հովհաննիսյանի հետ, ինչպես նաև հաստատել եմ գործել լայնախոհ և գիտելիքների տեր և փորձառու խմբագիրներ՝ երջանկահիշատակ պարոն Հովհաննեսի՝ Հովհաննես Մուրադյանի, Վալենտին Թովմասյանի հետ, որոնցից շատ եմ սովորել՝ թե՛ խմբագրական գործի հմտությունները, և թե՛ մարդկային փոխհարաբերությունների առնչությամբ:

Ամսաթերթն արտացոլում է Հայաստանի և Սփյուռքի երաժշտական կյանքը; Թերթում անդրադառնում ենք տարբեր միջոցառումներին, համերգներին, նոր հրատարակություններին, ինչպես անվանի երաժիշտների, երաժշտական գործիչների ու մանկավարժների, այնպես էլ երաժիշտ-ուսանողների, երաժշտական և արվեստի քոլեջների ու դպրոցների սովորողների ելույթներին, գործունեությանը՝ խրախուսելով նրանց հաջողությունները: Ունենք տարբեր խորագրերով բաժիններ՝ օրինակ համերգային կյանք, երաժշտական արվեստի երախտավորները, կոմպոզիտորական արվեստ, ուսանողի անկյուն: Ստեղծեցինք Ծովինար Չալոյանի դասախոսությունները էջը, որտեղ պարբերաբար ներկայացնում էինք ԵՊԿ երջանկահիշատակ պրոֆեսորի գեղագիտության արժեքավոր դասերը: Ստեղծել ենք գրական էջ, որտեղ ներկայացվում են ստեղծագործող երաժիշտների գործերը՝ բանաստեղծություններ, պատմվածքներ և այլն: Էջ ենք հատկացրել ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղին, որտեղ արտացոլվում է Գյումրիի կոնսերվատորիայի երաժշտական անցուդարձը: Մեր հրատարակությունում ենք նաև ԵՊԿ շրջանավարտների գործունեությանը ովքեր ապրում են և գործում արտերկրում:

Թերթն ընդլայնվել է. տպագրվում է 8-ից մինչև 16 էջի սահմաններում: Զետեղվում են հայերեն, ռուսերեն և անգլերեն հոդվածներ: 2018 թվականից փոխվել է դիզայնը, որի համար հիմք է ծառայել տաղանդաշատ Էդիկ Ղարուզյանի Armomega տառատեսակը, որը նա տրամադրել է ԵՊԿ հրատարակչությանը՝ հանձինս Գ.Շագոյանին, անհատույց:

Մտադիր ենք նոր էջեր ստեղծել ինչպես օրինակ՝ Մեր շրջանավարտները, և առավել բովանդակալից դարձնել ամսաթերթը, ներգրավելով ավելի շատ ուսանողների և լայնորեն տարածել այն: Այդ առումով համագործակցում ենք ոչ միայն ուսանողների, այլ նաև պրոֆեսորների հետ, որոնք հանդես են գալիս հոդվածներով: Ուրախալի է այն փաստը, որ ԵՊԿ պրոֆեսորների զգալի մասն ուղղորդում է ուսանողներին և նրանք ակտիվ արձագանքում են: Այս առնչությամբ պետք է նշեմ պրոֆեսոր Սվետլանա Սարգսյանին, ով միշտ պատրաստակամորեն հանդես է գալիս իր հոդվածներով և նաև ուղղորդում ուսանողներին, նաև ԵՊԿ ռեկտորի պաշտոնակատար Ծովինար Մովսիսյանին և դոցենտ Լուսինե Սահակյանին, որոնց շնորհիվ նույնպես երաժշտագետ ուսանողներն են հանդես գալիս հոդվածներով: Բացի այդ, հոդվածներ են գրում նաև երաժիշտ կատարողները: Համագործակցում ենք նաև Ա. Սպենդիարյանի անվ. տուն-թանգարանի, ՄԵԴ-երի հետ:

Ամփոփելով, մեջբերենք XIX դարի անգլիացի փիլիսոփա Հերբերտ Սպենսերի խոսքերը. «Առաջընթացը պատահականություն չէ, այլ անհրաժեշտություն»: Հրատարակչությանը և ամսաթերթին մաղթում եմ միայն առաջընթաց, զարգացում, հարատևություն և նորանոր հաջողություններ:

20-ամյա հոբելյանական «Երաժիշտ» ամեսաթերթի գործունեության առիթով ցանկանում եմ նշել այն խմբագիրներին, ովքեր մասնակցել են ամսաթերթի գործունեությանը և, որ թվականներին են համագործակցել.

Հիմնադիր և առ այսօր թողարկման պատասխանատու՝ Գոհար Կարլենի Շագոյան, հայ մասնագիտական երաժշտագիտական մամուլի հիմնադիրն է և առաջին անգամ պետական նոտային հրատարակչության՝ «ԵՊԿ հրատարակչության» հիմնադիր հրատարակիչ Հայաստանում՝ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում և Հայաստանի Կոմպոզիտորների միությունում՝ (պաշտոնական մամուլ «Հայ կոմպոզիտոր» ամսագրի և գիտական հոդվածների պարբերական ժողովածուի): Նա ՀԺՄ և Միջազգային ժուռնալիստների ֆեդերացիայի անդամ է:

Խմբագիր՝ հայերեն տեքստերի (2005-2017 թթ., մինչև դեկտեմբերի 27-ը կյանքին հրաժեշտը), հրատարակչական բաժնի վարիչ (2005-2011 թթ.)՝ Վալենտին Խաչիկի Թովմասյան արվեստագիտության թեկնածու և ԵՊԿ դոցենտ էր, նաև ՀԺՄ և ՀԿՄ անդամ:

Խմբագիր՝ հայերեն (արևելահայերեն, արևմտահայերեն և գրաբար) տեքստերի Հովհաննես Ներսեսի Մուրադյան (2005-2017 թթ.), երևանյան մտավորականության ճանաչված ռադիոական և բարեկիրթ անձնավորություն:

2013-ից՝ ՀՀ Արդարադատության նախարարությունից թույլատվություն ստացանք միաժամանակ մի քանի հոդվածներ տպագրելու բնագրերով ռուսերեն, անգլերեն և այլ լեզուներով:

Հրատարակչությունում խմբագիր՝ ռուսերեն տեքստերի և հետագայում վերջին տարիներին որպես կոմպոզիտոր նաև նոտային սրբագրիչ: 2001-ից առ այսօր՝ Սոֆա Մաթևոսի Ազնաուրյանը ռուսերեն տեքստերի խմբագիր է, նաև գրում է հեղինակային հոդվածներ: Երաժիշտ ամսաթերթում բնագրերով տպագրության իրավունքն ստանալուն պես 2013-ից առ այսօր նա մասնակցում է ամսաթերթում նույնպես որպես խմբագիր և հեղինակ: Ս. Մ. Ազնաուրյանը հանրապետությունում լավագույն խմբագիրների թվում է.

«За годы работы, почти со дня основания журнала «Музыкальная Армения», редактор Софа Азнаурян проявила себя как музыкант с

3

Поздравляю редакцию журнала “Музыкальная Армения” и газеты “Ержишт” с примечательным юбилеем – 20-летием основания газеты. Эта газета, несмотря на ее скромный тираж, приобрела свой вес в жизни армянской музыкальной культуры, поскольку она открывает картину современной армянской музыкальной жизни, публикуя рецензии о новых произведениях армянских композиторов и примечательных ярких исполнениях. Эта газета отражает активную жизнь редакции журнала “Музыкальная Армения” и газеты “Ержишт” и большой энтузиазм главного редактора Гоар Шагоян.

Примите мои искренние горячие пожелания успехов в работе всей редакции.

Маргарита Рухкян,

Заслуженный деятель искусств РА,

доктор искусствоведения,

ведущий научный сотрудник ИИ НАН РА

Շարունակում ենք հրապարակել ամսաթերթին հասցեագրված շնորհավորանքները թե՛ արտերկրում գործող մեր գործընկերների, և թե՛ երաժիշտ անվանի գործիչների և պրոֆեսորների, ովքեր տարբեր ժամանակներում համագործակցել են «Երաժիշտ» ամսաթերթի, նաև, ինչու ոչ, «Երաժշտական Հայաստան» գիտական միջազգային ամսագրի և «ԵՊԿ հրատարակչության» հետ

Միսակ Մանուշյանի անվան կազմակերպության հոբելյանական ալբոմը





Միսակ Մանուշյանի անվան կազմակերպության 2023, 2024, 2025 թվականների օրացույցները հայկական մշակույթի թեմաներով

«ԵՐԱԺԻՇՏ»ԱՄՍԱԹԵՐԹԸ 20 ՏԱՐԵԿԱՆ Է

ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ «ԵՊԿ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ 21-ՐԴ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ

2

широкой эрудицией, высоким профессионализмом, преданностью любимому делу. Через ее руки прошли более 65 выпусков, десятки хвалебных рецензий, информационных, философско-проблематичных статей, освещающих разнообразные процессы армянского музыкального искусства.

Софа Азанаурян не только редактор с поистине филологическим знанием языка, но и автор статей, часто рождающихся в процессе творческого общения с такими видными деятелями армянского искусства, как Э.Мирзоян, А.Арутюнян, Г.Канчели, М.Рухкян, Ш.Апоян, В. Сталиболцян, А.Григорян, К. Шахгалдян. Отметим и ее работу в качестве редактора пяти выпусков "Сборника научно-методических статей" профессорско-преподавательского состава ЕГК им.Комитаса, способствующую росту уровня статей преподавателей-исполнителей».

Ирина Вартановна Карулян,
переводчик, член Союза писателей Армении.
Софа Азанаурян с 2001 года – редактор журнала «Музыкальная Армения» (с 3-го выпуска), с 2004 – редактор статей на русском языке «Издательства ЕГК».

Խմբագիր-թարգմանիչներ՝ անգլերեն տեքստերի, Լիլի Հովհաննեսի Կարապետյան և Նարինե Լեոնիդի Միքայելյան (ամսաթերթում՝ 2024-ից առ այսօր):

Ռուսերեն տեքստերի խմբագիրներ երկուսն են եղել ,նաև որպես թարգմանիչներ՝ Եվա Կոչիկյանը, հետո Մարգարիտա Կիրակոսյանը (մինչև 2012 թվականը):

«Երաժիշտ» ամսաթերթի առաջին գլխավոր խմբագիր՝ երաժշտագետ Աննա Վաղարշակի Գևորգյան (2005-2008 թթ.), այժմ բնակվում և մասնագիտական գործառույթը շարունակում է՝ Ստամբուլում (Թուրքիա), որպես երգեհոնահար, ժուռնալիստ: Նրա ծննդյան 25-ամյակը նշեցինք հրատարակչությունում և այդպես էլ որպես ավանդույթ շարունակվեց նորավարտ երաժշտագետների ընդունելությունը, որպես ամսաթերթի գլխավոր խմբագրեր, որոնց առաջին հոբելյանական տարեդարձերը նշում էինք խմբագրությունում և առ այսօր այն շարունակվում է:

Գոհար Շագոյան

Մուշեղ Հարությունյան, Աննա Թորոսյան (ֆրանսերենի մասնագետ), Աշխեն Առուստամյան, Հռիփսիմե Մկրտչյան (երաժշտագետ, Առնո Բաբաջանյանի անվ. երաժշտամանկավարժական քոլեջի դասախոս), Ռուզաննա Մանյան (մեներգչուհի, Ավստրիա՝ Վիեննա, շնորհանդեսի ժամանակ ունկնդրեցինք նաև նրա՝ Վիեննայում լավագույնս կատարված երկու ձայնագրությունները)

Ակադեմիական մեներգեցողության ամբիոնի պրոֆեսոր Կարինե Մկրտչյանի դասարանի մասնակիցները և հյուրերը. ուսանող և մեներգիչ Նարեկ Հարությունյանը (Սոնոլդ Քոչարյանի դասարան), Կարինե Մկրտչյան, 2-րդ կուրսի ուսանող՝ Նարեկ Առուշանյան (Կ. Մկրտչյանի դասարան),Նվարդ Անդրեասյան (դիրիժոր, Հայաստան-Ֆրանսիա), Արտակ Այվազյան (Կ. Մկրտչյանի դասարան, նրա դասարանից ելույթ է ունեցել նաև Անի Յուխանյանը), ԵՊԿ դոցենտ՝ Անահիտ Կիրակոսյան, ԺԱՖ-ի ներկայացուցիչ Ներսես Կնեացեան (Ֆրանսիա՝ Փարիզ), երգիչ, կոմիտասագետ, թրքագետ և ԵՊԿ «Երաժիշտ» ամսաթերթի և «Երաժշտական Հայաստան» ամսագրի հեղինակ Տիրան Լօքմագէոզեան, Արմինե Աթոյան՝ «Երաժիշտ» ամսաթերթի գլխավոր խմբագիր

«Երաժիշտ» ամսաթերթի գլխավոր խմբագիր՝ երաժշտագետ, կոմպոզիտոր Տաթևիկ Ամիրյան (2008-2009 թթ.) այժմ բնակվում և մասնագիտական գործառույթը շարունակում է՝ Կալիֆոռնիայում (ԱՄՆ), այժմ դասավանդում է նահանգի Սան Հոզե քաղաքի պետական համալսարանում:

«Երաժիշտ» ամսաթերթի գլխավոր խմբագիր՝ երաժշտագետ Հասմիկ Համբարյան (2009-2012 թթ.) մասնագիտական գործառույթը շարունակել է Ա. Սպենդիարյանի տուն թանգարանում որպես գիտ-գիտաշխատող: Այժմ ԵՊԿ դասախոս է:

«Երաժիշտ» ամսաթերթի գլխավոր խմբագիր՝ երաժշտագետ Շուշան Գագիկի Այվազյան (2012-2013 և 2016-2017 թթ. և աշխատելու տարիներին դարձավ արվեստագիտության թեկնածու):

«Երաժիշտ» ամսաթերթի գլխավոր խմբագիր՝ երաժշտագետ, կոմպոզիտոր, «Փարոս» երգչախմբի արտիստ, Արմավիրի արվեստի պետական քոլեջի դասախոս Արմինե Վալերիկի Աթոյանն է 2014-2016 թթ. և 2018-ից առ այսօր),

Ռուսերեն տեքստերի խմբագիր՝ խմբավար, Հայ հոգևոր, Հայկական նոտագրություն և Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն դասընթացների դասախոս Կարինե Հրաչիկի Բրուտյանը (2007-2008 թթ.),

«ԵՊԿ հրատարակչությունում» որպես տարաբնույթ հրատարակությունների խմբագիր, «Երաժշտական Հայաստան» գիտական ամսագրի պատասխանատու քարտուղար, «Երաժիշտ» ամսաթերթի խմբագիր, «ԵՊԿ դասախոսների ուսումնամեթոդական հոդվածների պարբերական ժողովածուի» խմբագիր՝ հայրենի բարձր իմացությամբ աշխատել է ժուռնալիստ, մենակատար և միջազգային մրցույթների և փառատոների դափնեկիր քանոնահարուհի, երկարամյա ԵՊԿ դասախոս, մանկավարժ, ՀԺՄ և Միջազգային ժուռնալիստների ֆեդերացիայի անդամ Անուշ Մեսրոպի Կիրակոսյանը: Ով հայտնի է ոչ միայն հիանալի մշակութային երաժշտական հոդվածներով, այլ նաև ռազմական ժուռնալիստիկայի բնագավառում, և հեղինակություն է՝ լինելով ՀՀ հերոս, օդաչու՝ Հրայր Կիրակոսյանի քույրը:

Խմբագիր և հետո էլ «Երաժշտական Հայաստան» գիտական ամսագրի պատասխանատու քարտուղար է աշխատել՝ խմբագիր, Ռ. Մելիքյանի անվ. երաժշտական քոլեջի դասախոս և խմբավարության բաժնի վարիչ՝ Գրիգոր Հարությունի Հարությունյանը (2018 թթ.),

Խմբագիր՝ երաժշտագետ, մանկավարժ-ուսուցչուհի Լիանա Եղիազարյանը (2019 թթ.),

Համակարգչային օպերատոր՝ Սուսաննա Ղուկասյանը աշխատել է 2004-2010 թթ.:

«Հրատարակչության դիզայներները դրա հիմքերը արարող անձնիք են լինում. - փաստում է Գ. Շագոյանը և նշում. - *Հավելեմ, որ 1996 թվականից, երբ հիմնադրում էի «Երաժշտական Հայաստան» ամսագիրը, տպագրական հարցերն իրականացնում էի ՀՀ Գիտության և կրթության Մեթոդկաբինետի թույլատվությամբ (և նույն նախարարության հրատարակչություն-տպարանի աշխատակիցների հետ) հիանալի և չքնաղ մտավորական, տնտեսական Հայաստան» ամսագրի դիզայները (սև և սպիտակ էջերի) եղել է Նունե Սամվելյանը, ով աշխատել է՝ 2001-ից մինչև 2012 թվականը: 2004-ից բացվեց ԵՊԿ հրատարակչությունը և Նունե Սամվելյանը շարունակեց այդ ծանր բեռը կրել՝ արդեն դասագրքեր, գրքեր, նոտային գրականություն ստեղծել: Նա հանրապետությունում գրքարտադրության լավագույն մասնագետներից է: Նրա հիմնական աշխատանքը ՀՀ Ազգային գրադարանում էր, որպես համակարգչային բաժնի վարիչ, ով իր նպատակը բերեց մեր հրատարակչությունում՝ որակի մակերեսավորման և սև-սպիտակ տպագրությունների աշխատանքների չափանիշների առումներով: Նույն եռանդով շարունակեց գլխավոր դիզայների աշխատանքը և բարձրարժեք որակ ապահովեց ծրագրավորող և դաշնակահար Հարություն Արամի Երիջանյանը, հատկապես գունավոր դիզայնի, նոտային գրականության և նաև երաժշտական ծրագրերի տիրապետման շնորհիվ: Հատուկ «ԵՊԿ հրատարակչության» օգտագործման համար ստեղծեց Հյուբշմանի տառատեսակի ծրագիրը»:*

Նոտային հավաքչական աշխատանքները խմբագրությունում կատարվում են բարձր պրոֆեսիոնալիզմով: Խմբագիրներն են եղել՝ դաշնակահար-դիզայներ՝ Հարություն Երիջանյանը, կոմպոզիտոր՝ Արսեն Արտյոմի Բաբաջանյանը, մինչև 2012 թվականը, զուգահեռաբար և այնուհետ առ այսօր գործում է կոմպոզիտոր Դավիթ Պողոսյանը:

2012 թվականից առ այսօր աշխատում է Գոհար Վիլենի Հովհաննիսյանը՝ որպես դիզայներ և գեղարվեստական խմբագիր: Նա բարեխղճորեն և բարձր պրոֆեսիոնալիզմով առաջնորդվող մասնագետ է, կրթությունը՝ կազմարար մասնագիտացումով, տպարանային աշխատանքային հարուստ փորձ ունեցող:

2019-ից «Երաժշտական Հայաստան» ամսագրի միայն գունավոր կազմի պատրաստմամբ և հեղինակային իրավունքով՝ երեսի և դարձի դիզայնի համար աշխատում է Մարիամ Վլադիմիրի Պետրոսյանը:

Անգլերեն տեքստերի թարգմանիչներ են եղել դաշնակահար, կոմպոզիտոր Արթուր Ավանեսովը 2002-2005 թթ.: 2005-2009 թթ-ին նաև որպես հեղինակ և տերմինաբանական խորհրդի անփոխարինելի մասնակից, (որ ստեղծվել էր 2004-ից և գործել 7 տարի)՝ երգիչ և լեզվաբան Հրանտ Հովհաննեսի Խաչիկյանն է գործել,այժմ բնակվում է Շվեյցարիայում՝ Ժնևում, այնուհետև 2009-2012 թթ-ին նաև գերմաներենի մասնագետ, այժմ բնակվում է Շվեյցարիայում՝ Արմենուհի Համլետի Եսայանը, 2012-2013 թթ. բարձր գործավարական իմացությամբ համագործակցել ենք Ջեմմա Ստեփանի Գասպարյանի հետ (2013-ից) և որի շնորհիվ իրականացնում ենք առ այսօր ամսագրի Սկոպուս համակարգում ներգրավվումը, 2019-ից առ այսօր համագործակցում ենք երաժշտագետ Նարինե Լեոնիդի Միքայելյանի և լեզվաբան, ԵՊՀ դոցենտ Լիլի Հովհաննեսի Կարապետյանի հետ:

ԵՊԿ դոցենտ Մուշեղ Հարությունյանի հրատարակությունները նաև իրականացրած Շնորհանդեսները համապատասխան թեմաների այդ երկրներում. Մարսելում՝ Հայ-Ֆրանսիական, Սոֆիայում՝ Հայ-Բուլղարական մշակութային կապերի արդյունքում: Առաջին անգամ Երևանում իրականացվում է շնորհանդես «ԵՊԿ հրատարակչության» շրջանակներում և Շնորհավորում ենք նրա կատարողական, հրատարակչական գործունեության 50-ամյա հոբելյանը

ԳՈՀԱՐ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ 100-ԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԸ

1

Հայ ժողովրդի բոլոր ժամանակների մեծագույն երգչուհի Գոհար Գասպարյանը մեր ազգային արվեստի անհատականություններից մեկն է:

Իր բնատուր ձայնային բացառիկ տվյալներով, զարմանահրաշ քնարական կոլորատուրային սոպրանոյով, երաժշտականությամբ, աննման տեմբրով, աշխարհում հավասարը չունեցող ձայնածավալով (դիապազոն), լեզուների իմացությամբ, կատարողական ֆանտաստիկ երգչական վարպետությամբ Գոհար Գասպարյանը զարմացրեց աշխարհը:

Գոհար Գասպարյանի Կոմիտասյան մեկնաբանությունները, հոգևոր տաղերի և շարականների Աստվածային կատարումներն ապշեցնում էին ոչ միայն մեզ՝ հայերիս, այլև օտարներին: Երգչուհու յուրաքանչյուր օպերային ներկայացում կամ մենահամերգ դա մի հրավառություն էր:

Գոհար Գասպարյանի երգի մեջ լսում և տեսնում ես հայ պանդուխտի, հայ մարդու, հայ ժողովրդի կարոտը դեպի իր հայրենի օջախը, բնությունն ու Հայաստան աշխարհը: Նա ոգեղեն կամուրջ ստեղծեց Հայաստանի և Սփյուռքի միջև:

Երգչուհի՝ Գոհար Գասպարյանը ծնվել է 1924թ. դեկտեմբերի 14-ին, Եգիպտոսի մայրաքաղաք Կահիրեում:

Գոհարիկը ծնվել է յոթ ամսական և նրան ստիպված են եղել բամբակների մեջ պահել.... *«չը ապրիր»,* ասել էին ոմանք, իսկ մշեցի տատը պատգամել էր. *«Կապրի և ցեղիս ալ պարծանքը կըլլա: Նայեք, մարդիկներեն լույս կ՚առնագի»:*

Երգը «Քոքոյին» (ինչպես անվանում էին նրան տանը) համար, քիչ է ասել թե դառնում է կենսակերպ, երգն իր համար հենց ինքը կյանքն էր: Եգիպտահայությունը սիրում և գուրգուրում են Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու ինը տարեկան Գոհարիկի հոգեթով սուրբ երգերը: Կահիրեն երաժշտապաշտ քաղաք էր, օպերային քաղաք: Կահիրեն մեր Սփյուռքի ամենա մտավորական, արվեստասեր գաղթօջախ-օրրաններից մեկն էր: Կահիրեում է գտնվում աշխարհի լավագույն օպերային թատրոններից մեկը, ուր կայացել է Ջ. Վերդիի հանճարեղ «Միդա» օպերայի պրեմիերան:

Այս մթնոլորտում, Գոհարը, ճակատագրի բերումով ունեցավ վոկալ արվեստի խոշորագույն ուսուցիչներ՝ Էլիզ Ֆելդման և Վինչենցո Կարրո, որոնց մոտ վոկալ և երաժշտական բացառիկ դպրոց անցավ:

Բացառիկ երաժշտականություն, անմնացորդ նվիրում, անհատնում աշխատասիրություն՝ ահա նախադրյալների ոչ լրիվ ցանկը, որոնք կանխորոշեցին մեծանուն երգչուհու ճախրանքը:

Տասնհինգ տարեկան Գոհարը դառնում է Եգիպտոսի ազգային Ռադիոյի մեներգչուհի: Հետո արդեն շոնդալից ելույթներ Եգիպտոս ժամանած աշխարհահռչակ նվագախմբերի և անվանի դիրիժորների հետ, հետո՝ հրավեր հետև Ծագող արևի երկիր՝ Ճապոնիա, քաղաքից-քաղաք 2 ամսվա հյուրախաղեր, որի ընթացքում հիսունյոթ համերգ, փաստորեն ամեն մի համերգ, դժվարագույն երկացանկով՝ արևմտաեվրոպական, ռուս, հայ դասականների երկեր, ինչպես նաև Կոմիտաս, Սայաթ-Նովա, ժողովրդական երգեր:

...Մոսկվայի Մեծ թատրոնում ներկայացվում է Ռոսսինիի «Սևիլյան սափրիչը»: Դա Գոհարի առաջին բեմելն էր Սովետմիության մայրաքաղաքում: Ռոզինան, օպերայի հերոսուհին, ավարտելով վիրտուոզ արիան, հանդիսատեսը թույլ չի տալիս, որ ներկայացումը շարունակվի: Ճարահատյալ բեմ է հրավիրվում նրա դաշնակահարուհին, որի նվագակցությամբ Ռոզինա-Գասպարյանը մի ամբողջ համերգային բաժին է «ներհյուսում»՝ ընդհատված ներկայացման մեջ... Աննախադեպ փաստ օպերային արվեստի պատմության մեջ...

Մի այլ կարևոր փաստ Գ. Գասպարյանի հյուրախաղերից: Իրան:

Երգչուհին հրավիրվում է երգելու Շահի պալատում, ուր հյուրընկալվել էր Խորհրդային Միությունից ժամանած բարձրաստիճան հյուրը՝ Լեոնիդ Բրեժնևը:

Պալատական ունկնդիրները, Շահը և նախագահը մեծ հետաքրքրությամբ լսելով երկու մասից կազմված համերգը, որի երկրորդ բաժինը բացառապես հայկական երաժշտություն էր, երգչուհին մեծ ներշնչանքով կատարեց նաև «Կռունկը», «Անտունին»: Ընդ որում ոչ միայն երգեց, այլև իր ընտիր անգլերենով, որը թարգմանվում էր նաև ռուսերեն, ներկայացրեց հայ պանդուխտի ողբերգությունը: Եվ որքան մեծ էր Գոհարի զարմանքը, երբ համերգի ավարտին Իրանի Շահը խնդրեց դարձյալ երգել... «Կռունկը»: ...Գուցե և այս համերգից ստացած խորը տպավորությունն էր, որ տարիներ անց Գոհար Գասպարյանն արժանացավ «Աշխատանքային հերոս»-ի բարձր կոչման: Նա առաջին խորհրդային երգչուհին էր, որ ստացավ այդ Ոսկյա բարձր պարգևը:

Ուր և որտեղ էլ երգել է Գոհար Գասպարյանը, ինչ մեծագույն պարգևներ և գնահատականներ որ ստացել է, մնացել է իր հայրենի հողի հավատարիմ զավակը: Դրա վառ ապացույցը մի լրագրողի Գոհարի տված անկեղծ և խորհիմաստ պատասխանն է.

«Տիկին Գոհար, Ձեր անթիվ հյուրախաղերի ընթացքում, ի՞նչն է Ձեզ ամենամեծագույն ուրախությունը պարգևել. փայլուն գրախոսականնե՞րը, հանդիպումները թագավորների, նախագահների հետ, հանդիսարեսի բուռն ծափերը, թե՞ մեծահարուստների ընծաներն ու հոնորարները: Ո՞րն է եղել Ձեր ամենամեծ ուրախությունը...

– Ամենամեծ ուրախությունս եղած է տուն վերադառնալս...»

Հայ օպերային բեմի փառաբանված արտիստուհի, կամերային երգեցողության նրբաճաշակ վարպետ, հասարակական գործիչ Գոհար Գասպարյանը ստեղծագործական նվիրում և պատասխանատվության մեծ զգացում ուներ Հայրենիքի, իր ժողովրդի և սիրած արվեստի հանդեպ:

Մոտ չորս տասնամյակ դասավանդեց և շուրջ տասներկու տարի ղեկավարեց Մեներգեցողության ամբիոնը Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում՝ տալով փայլուն շրջանավարտներ:

Մեծն Վարպետ Ավետիք Իսահակյանը լսելով Գոհար Գասպարյանի երգը հարցրել է, - *Գոհար, այդ դո՞ւ ես սոխակից երգել սովորել, թե՞ սոխակը քեզնից»:* Եվ մեծ երգչուհուն օծել է «Հայոց Սոխակ» անունով:

«Հայոց Սոխակը» հանգչում է մեր Մեծերի, Արվեստի և Մշակույթի գործիչների Պանթեոնում՝ Կոմիտասի, Ա. Խաչատրյանի կողքին:

Հայաստանի Երաժշտական Ընկերության նախաձեռնությամբ՝ որպես մրցույթի կազմակերպիչ, շուրջ 20 տարի հանրապետությունում անց է կացվում մեներգիչների (դասական երգեցողություն) հանրապետական մրցույթ: Մրցույթի համակազմակերպիչ է նաև Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան: Իսկ աջակիցը ՀՀ Մշակույթի, հետագայում ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը:

Այս տարի այն անց էր կացվում 9-րդ անգամ (4-ը Գոհար Գասպարյանի անվան), որը նվիրված էր ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, պետական մրցանակների դափնեկիր, պրոֆեսոր Գոհար Գասպարյանի ծննդյան 100-ամյա հոբելյանին:

XX դարի հայ օպերային բեմի ականավոր անհատականություն Գոհար Գասպարյանն իր երկարամյա բեմական գործունեությամբ անջնջելի հետք է թողել վոկալ կատարողական արվեստի տարեգրության էջերում: Նա երևույթ էր մեր երաժշտական-կատարողական արվեստում:

Գոհար Գասպարյանի ծննդյան 100-ամյակին նվիրված համահայկական մրցույթին մասնակցության հայտ էր ներկայացրել 43 երգիչ-երգչուհիներ հանրապետության երաժշտական, արվեստի քոլեջներից, պետական կոնսերվատորիայի ուսանողներ, ասպիրանտներ, շրջանավարտներ, ինչպես նաև Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի երիտասարդ արտիստներ:

Մրցույթի 3-րդ փուլ անցան 12 մասնակիցներ, ովքեր ելույթ ունեցան Հայաստանի ազգային ֆիլիարմոնիկ նվագախմբի հետ:

Մրցույթի դափնեկիրների եզրափակիչ գալա համերգը և Գոհար Գասպարյանի ծննդյան 100-ամյա հոբելյանական հանդիսությունը կայացավ 2024 թվականի դեկտեմբերի 9-ին, Արամ Խաչատրյան համերգասրահում:

Մրցույթի հաղթողների համար (կանանց և տղամարդկանց ձայների համար) սահմանվել էին մրցանակներ, դիպլոմներ, դրամական պարգևներ, ինչպես նաև Նուռի (Արման Դավթյան) հեղինակային արձանիկը:

Մեծանուն երգչուհին չափազանց սիրված էր իր ժողովրդի կողմից, քանզի նրա յուրաքանչյուր օպերային ներկայացում, կամ մենահամերգ՝ դա մի հրավառություն էր:

Գոհար Գասպարյանի ձայնը գերազանցորեն արտահայտում էր իր խառնվածքն ու անկեղծ էությունը: Նրա երգեցողությունը զմայլեցնող հնչյունների գերագույն հաճույք էր:

Ահա թե ինչպես է բնորոշել Մեծն երգչուհուն մեր ազգի մի այլ մեծանուն երգչուհի Զարուհի Դոլուխանյանը. *«Выдающаяся певица современности Гоар Гаспарян явилась на оперноли и концертноли небосклоне как яркая звезда, неповторимая, ни на кого не похожая, и сразу стала эталоноли современного вокала. Светлая личность, лилый, теплый друг, непревзойденная певица – такой она останется в сердцах тех, кто знал, любил и работал с ней»...*

Գոհար Գասպարյանի անվ. մեներգիչների համահայկական 9-րդ մրցույթի մրցանակակիրները

ԴԱՎԻԹ ՂԱԶԱՐՅԱՆ
ԵՊԿ պրոֆեսոր,
ՀԵԸ նախագահ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՆՅՈՒԴԱՐՁ

ՓԵՏՐՈՒԱՐ 16, 2025 ԱՌԱՎՈՏԻ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՍԱՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

«ՀՈՎԵՐ»-Ը ԵԼՈՅԹ ՈՒՆԵՑԱՎ ՓԱՐԻԶԻ ՀՆԱԳՈՅՆ ՍԵՆ ԺԵՐՄԵՆ ՏԸ ՓՐԷ ՎԱՆՔՈՒՄ

«Մէկ շաբաթ Արեւելքում» փառատօնի շրջանակում «Հովեր» պետական կամերային երգչախումբը՝ խմբավար Սոնա Յովհաննիսեանի ղեկավարմամբ ելոյթ ունեցաւ Փարիզի հնագոյն Սեն Ժերմեն տը Փրէ վանքում:

Ծրագրում ընդգրկուած էին հայ դասական եւ ժամանակակից, ինչպէս նաեւ արեւմտաեւրոպական կոմպոզիտորների ստեղծագործութիւններ (Կոմիտաս, Տ. Մանուրեան, Է. Յովհաննիսեան, Ա. Ազիզեան, Պ. Պրիթլն, Ռ. Մ. Շաֆեր, Վ. Պուխենպլրկ, Ֆ. Փուլենք):

«Մեզ համար պատիւ ու պատասխանատուութիւն էր «Մէկ շաբաթ Արեւելքում» փառատօնին «Հովեր» պետական կամերային երգչախմբի մասնակցութիւնն ու հայ խմբերգային երաժշտութիւնը ներկայացնող համերգային ծրագրով Փարիզում կրկին անգամ հանդէս գալը: Շնորհակալ ենք ֆրանսիական կողմին ջերմ ու պատուաւոր ընդունելութեան, լեցուն դահլիճի, սիրոյ ու ջերմութեան փոխանակման եւ այս ամէնը հնարաւոր դարձնող ֆինանսական աջակցութեան համար» նշեց Սոնա Յովհաննիսեանը:

Ի նշան անվերապահ նուիրման՝ «Հովեր» երգչախումբը պատրաստում է նոր համերգային ծրագիր, այս անգամ Երեւանում, «2025-ֆրանկոֆոնիայի» շրջանակներում. նշում է «Հովեր» պետական կամերային երգչախմբի գեղարուեստական ղեկավար եւ խմբավար Սոնա Յովհաննիսեանը:

2 2025 Փետրուար 18 ԱՌԱՎՈՏ

ՓԻԱՍՍԱ

ՄՕՐՄԷ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԵՐԳԶՈՒՀԻ ՍՈՂԱՆ ՇԱՀԵՑԱՒ «ՏԱՐՈՒԱՆ ԿԻՆ ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ» ՄՐՑԱՆԱԿԸ

Ուրբաթ, Փետրուար 14-ին, Փարիզեան շրջանի Հօ-տը-Սէն նահանգի « Seine Musicale » համերգներու դահլիճին մէջ հեռատեսիլի «Ֆրանս 2» կայանի կազմակերպած 40-րդ « Victoires de la Musique »-ի հանդիսութեան ընթացքին, մօրմէ հայ, 25-ամեայ Սոլան շահեցաւ «տարուան կին յայտնութիւն» մրցանակը:



ԽՈՐԱԹԱՓԱՆՑ ԽՕՍՔԵՐ ԵՒ ՀԶՕՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Դեռ տարի մը առաջ անծանօթ Սոլան, որ ընկերային ցանցերու վրայ ինքզինք կը նկարագրէ որպէս «սփոփարար կախարդուհի», գործեց այդ կախարդանքը, շնորհիւ հակադրութիւններով լի իր հմայքներուն: Նուրբ, դիւրաբեկ տեսքով, մեծ սեւ աչքերով այս մանկամարդուհին խորաթափանց խօսքերով եւ հզօր մեկնաբանութեամբ արուեստագէտ մըն է:

Իր բիւրեղեայ ձայնով ան կը փորձէ մեղմացնել «զինք անհանգստացնող, զայրացնող եւ ցաւցնող նիւթերը»՝ ինչպէս հոգեկան առողջութիւնը, կնոջ վիճակը, սեռական բռնութիւնները, այն ոտնձգութիւնը, որ իր դիւղէն տղայ մը պատճառած է իրեն մանկութեան տարիներուն...:

*Բուն անունով **Սոլան Վիս-Ամպոյեան**, ծնած է Փարիզ, դերասան հօրմէ եւ **հայկական ծագումով բազմարուեստ մօրմէ:** Մեծցած է մայրաքաղաքին եւ Աւինիոնի (Վոքլիւզ) միջեւ: Ան օժտուած է բազմաթիւ ձիրքերով թատրոն, յատկապէս պար եւ երաժշտութիւն:*

ՀԱՆԴԻՍԱՏԵՍԸ ՍՈՒԼՈՅՆԵՐՈՎ ԴԻՄԱՒՈՐԱԾ Է ՌԱՇԻՏԱ ՏԱԹԻՆ

Կարճ պահ մը, որ աննկատ չանցաւ « Seine Musicale »-ի սրահին մէջ: Հանդիսութեան ներկայ,– Ալիեւներու բարեկամ,– Մշակոյթի նախարարուհի Ռաշիտա Տաթի սուլոցներով դիմաւորուեցաւ: Սակայն ան լայն ժպիտ մը ցուցադրեց տեսախցիկներուն առջեւ:

ՓԱԹՐԻՔ ՏԷՎԷՃԵԱՆԻ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆԸ

2014 Յուլիս 5-ին, Հօ-տը-Սէնի նահանգային խորհուրդի այն օրերու նախագահ Փաթրիք Տէվէճեանի մղումով, « Seine Musicale »-ի-ի առաջին քարը դրուեցաւ: Այս ծաւալուն ծրագիրը, այսօր դարձած է նահանգի մշակութային կարեւոր խորհրդանիշ մը:

Սոյն ծրագրի նախաձեռնողին յիշատակը յարգելու համար, տեղւոյն 1500 հոգինոց սրահ մը վերանուանուած է «Փաթրիք Տէվէճեան սրահ»:

Ճակատագիրը, երբեմն հեգնական, յետմահու ակնարկ մը վերապահած էր Փաթրիք Տէվէճեանին: Երաժշտութեան այս տաճարը, որ ան երեւակայած եւ որուն նախաձեռնած էր, տեսաւ հայկական ծագումով աստղի մը՝ Սոլանի յայտնութիւնը: ■

4 2025 Փետրուար 20 ԱՌԱՎՈՏ

ՀԱՅԱՍՏԱՆ

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ ԹԱՆԳԱՐԱՆԻՆ ՄԷՋ ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱՐՍԵՂ ԿԱՆԱՉԵԱՆԻ 140-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԱՌԺԱՄԵԱՅ ՑՈՒՑԱԴՐՈՒԹԻՒՆ





Փետրուար 16-ին, Գրականութեան եւ արուեստի «Եղիշէ Չարենց» թանգարանին մէջ բացուած է 20-րդ դարու սփիւռքահայ անուանի երգահան, խմբավար Բարսեղ Կանաչեանի 140-ամեակին նուիրուած առժամեայ ցուցադրութիւն, որ կ'ընդգրկէ խմբավարի կեանքին ու գործունէութեան առնչուող ցուցանմուշներ:

Ցուցադրութեան ներկայացուած են Կանաչեանի ջութակը,– զոր հայրը նուիրած էր իրեն եւ մինչեւ իր կեանքի վերջը մնաց անոր հետ,– բազմաթիւ լուսանկարներ, իր վաստակին համար ստացած պարգեւը՝ Լիբանանի «Մայրիներ» Ա. կարգի շքանշանը եւ այլն:

Բացման արարողութեան գործադրուած է գեղարուեստական յայտագիր՝ «Կանաչեան» արուեստի դպրոցի աշակերտներուն մասնակցութեամբ: ■

В 2024 году Комитетом по знакам почтовой оплаты РФ была выпущена почтовая марка к 100-летнему юбилею великого советского скрипача, Народного артиста СССР, лауреата Ленинской премии Леонида Борисовича Когана (1924–1982). С просьбой о выпуске такой марки в Министерство цифрового развития, связи и массовых коммуникаций РФ обратился член Союза композиторов России, Союза композиторов Армении, многократный призер Всероссийских и Международных филателистических выставок Норайр Александрович Егоян. После выпуска марки как инициатор выпуска он был награжден Почетной грамотой Союза композиторов России и Почетной медалью “Комитас” Армянского музыкального общества.



С. Азнаурян

ԳԱԳԻԿ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 28-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՄԵՐԳ

1

«Մեր երկրի անկախությունն ամեն օր մեր կարիքն ունի», – 44-օրյա Արցախյան պատերազմում անմահացած թանկ անուններից, Ակադեմիական երգեցողություն մասնագիտացմամբ մագիստրոս Գագիկ Խաչատուրյանի խոսքերն են, որոնց շարունակությունը խոստում պետք է դառնա ամեն մեկի, հատկապես՝ կոնսերվատորիականի համար. *«...Եթե յուրաքանչյուրն ազնիվ և արդար կատարի իր գործը, ապա օրեցօր կմոռնանք մեր երազած պետությանը»:*

Այս տարի ընկերները, համակուրսեցիները, միշտ հիշող երաժիշտները հինգերորդ անգամ Գագիկի ծննդյան օրը, 28-ամյակը նշեցին նրա երկնային ներկայությամբ: Կոմիտասի թանգարան-ինստիտուտում տեղի ունեցավ համերգ, որը կազմակերպել էին Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ակադեմիական երգեցողության ամբիոնի պրոֆեսորներ՝ Ալլա Գալուստյանը և Արնոլդ Քոչարյանը:

Համերգի մասնակիցներ

Մասնակցում էին՝ Ալեքսան Խաչատրյանը, Լուիզա Գրիգորյանը, Օնիկ Միրզոյանը, Խորեն Քոթանջյանը, Վիկտորիա Գարգալաջևան և Սյուզաննա Ավետիքյանը, Լևոն Հայրապետյանը, Անի Ղազարյանը, Ալբերտ Տիգրանյանը, Ռոլանդ Սոֆոյանը, Էլեոնորա Հարությունյանը, Լևոն Ալմասյանը, Նարեկ Հարությունյանը, Անի Ղազարյանը, Արման Գրիգորյանը, Նարեկ Բալդրյանը և Գրիշա Մարտիրոսյանը, նվագակցողներ՝ Իրինա Ջավադյան, Լիլիթ Հակոբյան, Աննա Ջալլադյան: Տեսաուղերձով շնորհավորանքներ հղեցին երգիչներ՝ Ակսել Դավեյանը, Տիգրան Քախվեջյանը, Գրիշա Մարտիրոսյանը և Ռուբեն Ոսկանյանը:

Խմբագրական

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ

Սվետլանա Սարգսյան

ԵՊԿ պրոֆեսորներ՝ երաժշտագետ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ և Լեհաստանի մշակույթի վաստակավոր գործիչ Սվետլանա Կորյունի Սարգսյանին և դաշնակահար, Լեհաստանի արվեստի վաստակավոր գործիչ, «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ կարգի մեդալակիր, Երևանի պետական կոնսերվատորիայի «ԵՊԿ հրատարակչության» հիմնադիր ռեկտոր, հրատարակչական խորհրդի նախագահ Սերգեյ Գեորգիի Սարաջյանին ծննդյան հոբելյանական տարեդարձերի առթիվ:

Երկու արվեստագետներ, ովքեր իրենց արժեքավոր ներդրումն ունեն հայ երաժշտական արվեստի զարգացման գործում: Հայրենիքում գնահատվել և արժանացել մեդալների, գիտական կոչումների նաև Հայաստանի երաժիշտներից միայն նրանք են, որ նաև Լեհաստանում են բարձր պարգևներ ստացել՝ Ս. Սարգսյանը՝ Լեհաստանի մշակույթի վաստակավոր գործչի, իսկ Ս. Սարաջյանը՝ Լեհաստանի արվեստի վաստակավոր գործչի կոչմանը, իրենց բազմամյա գործունեության համար:

Սվետլանա Սարգսյանը դեռ երիտասարդ տարիքից տիրապետում է լեհերենին և իր ստեղծագործական ամբողջ կյանքի ընթացքում համագործակցել է լեհ աշխարհահռչակ ժամանակակից կոմպոզիտորների ու կատարողների հետ՝ տարածելով նրանց արվեստը թե՛ Հայաստանում, թե՛ նրա սահմաններից դուրս:

Սերգեյ Սարաջյանը բազմիցս հյուրախաղերի է մեկնել Լեհաստան, բազմաթիվ համատեղ համերգներ ունեցել՝ հաստատելով և ամրապնդելով հայ-լեհական կապերը:

Խմբագրական



Սերգեյ Սարաջյան

Աննա Արևշատյանի «Տիգրան Մանսուրյան» մենագրությունը լավագույն ընծան էր կոմպոզիտորի 86-ամյակի առթիվ

Տպարանի թարմ բույրն ունեին նոր գրքի առաջին օրինակները, որոնք ներկայացվեցին Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության նիստերի դահլիճում կայացած շնորհանդեսին: Արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Աննա Սենի Արևշատյանի՝ օրերս լույս տեսած գիտական մենագրությունը ներկայացնում է Տիգրան Մանսուրյանի կյանքն ու ստեղծագործությունը: Դա կոմպոզիտորի ստեղծագործական ուղու մասին առաջին ամբողջական-համապարփակ գիտական ուսումնասիրությունն է՝ շարադրված բավական մատչելի, լայն ընթերցողի համար հասանելի լեզվով, ու հետաքրքրական, միաժամանակ ուսանելի կարող է լինել թե՛ մասնագիտական շրջանակների, թե՛ Տ. Մանսուրյանի արվեստը սիրող, գնահատող երաժշտասերների համար: Դա այն հազվագյուտ գրքերի շարքը պետք է դասել, որոնք հիմնավոր կերպով ներկայացնում են մարդու անձն ու գործն իր կյանքի օրոք: Հենց դա էլ ընդգծեցին շնորհանդեսին ելույթ ունեցողները, որոնց թվում էին ՀՀ Ազգային ակադեմիայի արվեստի ինստիտուտի տնօրեն, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Աննա Ասատրյանը, ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս Յուրի Սուվարյանը, Կոմիտասի թանգարան-ինստիտուտի գիտխորհրդի նախագահ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Միհր Նավոյանը, այլք: Գիրքը լույս է տեսել ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ, Երևանի քաղաքապետարանի աջակցությամբ: Շնորհանդեսը կայացավ հունվարի 27-ին, Տիգրան Մանսուրյանի ծննդյան 86-ամյակի օրը:

«Տիգրան Մանսուրյանը գնահատված արվեստագետ է, – նշեց Յուրի Սուվարյանը: – *Խորհրդային տարիներին արժանացել է պետական մրցանակի, ապա ստացել Սրամ Խաչատրյանի անվ. մրցանակ և էլի շատ մրցանակներ, շքանշաններ, մեդալներ: Տիկին Արևշատյանն առաջին անգամն է, որ գիտական մենագրությամբ ներկայացրել է մեծ կոմպոզիտորի ստեղծագործությունը, բայց չեմ կարող նաև չհիշել արվեստի ինստիտուտը, որը ձգտում է անդրադառնալ մեր երաժշտական կյանքի բոլոր նշանավոր իրադարձություններին: Լուրջ փորձ է արված ներկայացնելու մեծ արվեստագետի ժառանգությունը հենց գիտական սկզբունքներով»:*

«Տիգրան Մանսուրյանի մասին մինչ օրս մենագրություն չի գրվել մեզանում, բայց նա այն հեղինակներից է, որի մասին խոսքի պակասություն չի եղել մեր իրականության մեջ, – ասաց Միհր Նավոյանը: – *Նա այն կոմպոզիտորներից է, որի սիրված լինելուն կարող էին զուգադրվել ընդամենը մեկ-երկու մարդ: Սիրված, գնահատված՝ մեր արվեստի առաջնորդներից մեկն է այսօր, մեծ, վաստակաշատ կոմպոզիտոր՝ և՛ իր հայրենիքում ընկալված, և՛ իր հայրենիքի սահմաններից դուրս ճանաչված, այսօր էլ ակտիվորեն կատարվող հեղինակ:*

Արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Աննա Արևշատյանն իսկապես առաջին անգամ համահավաք կերպով մենագրություն է առաջարկում մեզ Տիգրան Մանսուրյան մասին: Հսկայական նյութի հիման վրա կառուցված գիտական մենագրություն, դիմանկար է, արվեստագիտության մեջ շատ տարածված մի ժանր, որն ունի վաղուց ձևակերպված իր մոդելները, կաղապարները: Սակայն հենց գրքի սկզբում հեղինակն ասում է, որ ինքը չի հետևելու այդ կաղապարներին: Բնավ չվնասելով գրքի որակին և մակարդակին՝ Ա. Արևշատյանը գիրքը շարադրել է աշխույժ, կենդանի, գրեթե գեղարվեստական լեզվամատածողությամբ, ինչը թեթև է դարձնում գրքի ընթերցումը նույնիսկ երաժշտասերի համար, և ոչ միայն՝ մասնագետի: Գիրքն ունի ինը գլուխ: Ենթաբաժինների առատությունը պայմանավորված է գրքի գլխավոր կերպարի անհատականությամբ, նրա ժառանգությամբ: Ինը գլուխներում Արևշատյանը դասակարգել է Մանսուրյանի ժառանգությունը՝ ըստ ընդունված երաժշտագիտական բաժանումների, ըստ ժանրերի՝ կամերայինից մինչև խոշորակտավ ստեղծագործություններ, մինչև սիմֆոնիկ ժանր»:



Աննա Արևշատյան, Տիգրան Մանսուրյան

Մ. Նավոյանը նկատեց նաև, որ այս գիրքը հայ մարդու շատ իրական պատմություն է, որում ստեղծագործության վերլուծության հետ «գիրկընդխառն» վերլուծվել են Մանսուրյանի կենսագրությունը և գեղագիտական հայացքները, վերջում՝ հարցուպատասխանով, որտեղ կոմպոզիտորը տարբեր հարցերի շուրջ խոսում է ընթերցողների հետ: *«Գիրքը փաստում է նաև, որ մեր երաժշտագիտությունն իր բարձր պրոֆեսիոնալ մակարդակով ապրում է, պտղաբեր տպավիս և հետ չի մնում ստեղծագործ մտքի շնչառությունից: Վերջապես, գիրքն ինձ համար կարևոր է նրանով, որ վերջապես հայ ուսանողին կարող եմ մի գիրք առաջարկել Մանսուրյանի մասին, որում XX դարի հայ երաժշտական մշակութային բազմաթիվ հարցեր ներկայացված են համալիր տեսքով և դարի ստեղծագործական միտումների համատեքստում, ամբողջական, անհրաժեշտ ընդգծումներով»:*

Աննա Արևշատյանը պատմեց, որ առանձին մենագրությամբ Տիգրան Մանսուրյանի կյանքին անդրադառնալու գաղափարը ծնվել էր 2022-ին՝ Իտալիայում արվեստագիտական գիտաժողովին մասնակցելիս, երբ տարբեր քաղաքներում լինելով՝ մտովի քանիցս անդրադարձել է այն իրողությանը, որ հայ անվանի կոմպոզիտորի գործերը հնչել են Եվրոպայի այս կամ այն համերգասրահում: Իրոք, Մանսուրյան ազգանունը հռչակ է բերում ոչ միայն հեղինակին, այլև հայ ազգին, և այդ հռչակը հաստատվել է եվրոպական ամենաբարձր պարգևներով: Տ. Մանսուրյանի ստեղծագործությանն իր անդրադարձներն այն հիմքն էին, որ դրդել էին ձեռնարկել գրքի վրա աշխատանքը: Հեղինակն ինչքան էլ քաջատեղյակ էր կոմպոզիտորի ստեղծագործությանը, այդուհանդերձ ընթացքում հայտնություններ էր արել՝ տեղեկանալով իր համար անհայտ գործերի մասին, ժամեր զրուցելով մաեստրոյի հետ, բացահայտումներ անելով և դրանք հանձնելով թղթին: Բազմաթիվ աշխատասիրությունների հեղինակ լինելով՝ հեղինակը խոստովանեց, որ հուզված է, քանի որ սա առաջին շնորհանդեսն է իր կյանքում:

ՀԱՍՄԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

https://azg.am/am/%d5%a1%d5%b6%d5%b6%d5%a1-%d5%a1%d6%80%d5%a5%d6%82%d5%b7%d5%a1%d5%bf%d5%b5%d5%a1%d5%b6%d5%ab-%d5%bf%d5%ab%d5%a3%d6%80%d5%a1%d5%b6-%

Перпетуум Нобиле, или Непрерывность добра

Перпетуум мобиле – вечный двигатель, это все знают. А вот Перпетуум Нобиле открыл лично я. Он вырабатывает и потребляет энергию добра и благородных побуждений. Вечно. Пока живет. Просто. Как в грамматике: пока я живу, пока ты живешь, пока он живет.

Открылось мне это в Ереване. Было жаркое лето 1983 года. Все почему-то строилось, и все сразу: музей Хачатуряна, Бетховенский зал в Дилижане, даже в Союзе композиторов шел какой-то ремонт, и клацанье, визг, скрежет, уханье, шуршанье сопровождали композитора Эдварда Михайловича Мирзояна, который был прорабом всех этих строек, снабженцем – доставалой, архитектурным надзором, художником по интерьерам, отцом – командиром и подносчиком снарядов, и все в одном лице, и все одновременно.

Мы снимали о Мирзояне кино. Любой документалист скажет вам, что снимать портретный фильм без ключа, без контрапункта, без сюжетного стержня или сценарного хода, словом, как ни назови – без драматического поворота, придающего объем происходящему – напрасная трата пленки. И у нас такой ход был, был такой ключ, мы заранее знали, что все эти стройки, секретарство, депутатство, циковство, даже консерваторское преподавание отнимают Мирзояна у музыки. Но, мотаясь за ним по разморенному жарой Еревану, уплотняя своими съемками его из без того сумасшедший график, мы снова и снова видели счастливого человека, занятого, условно, своим делом, получающего искреннее удовольствие от того, что в ЦК удалось добыть денег, а голубой ковролит прекрасно гармонирует с интерьером Бетховенского зала. И удовольствие это не просто убедительно, оно заражает и нас, и мы, влюбленные в мирзояновскую веселую непритязательную естественность, только к вечеру в очередной раз спохватываемся, что опять ни на шаг не приблизились к контрапункту, и ни грана не уловили столь важной для нас тоски художника по мольберту, писателя – по белому листу бумаги, а композитора... по чему положено тосковать композитору? Вот по этому самому... Никак мы этого «поймать» не можем.

На вечерней пятиминутке мы с оператором Игорем Мордмиловичем одинаково недоумеваем: или он великий артист, или мы ни черта не понимаем в документалистике, или ... нету в нем этой тоски, и все наши ухищрения напрасны.

Дело в том, что понятие – прием «скрытая камера», которым зачастую объясняют естественность поведения в кадре персонажей документальной драмы, понятие довольно условное и уж точно не всеобъемлющее. Камеру ведь почти невозможно скрыть от героя. От случайного персонажа – да, бывает, а от героя, который знает, что все, что тут происходит, это – про него, как ее скрыть? Поэтому бывает «забытая» камера, «привычная» камера, камера активная, с которой герой общается, обнаруживая ее присутствие, словом, все зависит от умелости документалистов и от психологии, а если хотите, то даже от психофизики героя, ну и еще от мно жества привтекающих обстоятельств.

Так вот, каковы взаимоотношения Мирзояна и камеры, мы ни как не могли понять. Он менял их на ходу: только что увлеченный обсуждением качества кладки, до хрипа споривший по-армянски с рабочими и не замечавший ни нас, ни аппарата, мог без перехода покоситься в камеру и со словами «я ему говорю...» с удовольствием пересказать разговор по-русски. Мог во время прямого интервью забыть о нас к чертовой матери и долго азартно переругиваться с кем-то одним и пересмеиваться с другим сразу по двум своим кабинетным телефонам. Совершенно не раздражался, когда его просили что-то повторить или продолжить. Словом, ни у оператора, ни у меня такого «легкого» героя до сих пор просто не было. В Мирзояне 1983 года была такая увлеченность каждым делом, такая наполненность каждой проживаемой минуты, в том числе и делом снимания фильма в минуты включенной камеры, что одно другое только дополняло, добавляло куража.

Правда, и мы старались ему не мешать и держаться двух главных принципов, о которых договорились с Эдвардом Михайловичем в первую встречу. Об этом – малое лирическое отступление.

Я не люблю начальников. А уж в советские времена меня от них просто подташнивало – настолько не мог я найти с ними верного тона: то тявкал как Моська на Слона, то деревенел многозначительной букой, словом, терял всякую естественность, отчего испытывал ущемление достоинства и, как водится, презирал за это во-первых, начальство, а во-вторых – себя.

Поэтому, когда главный редактор студии, предлагая встретиться с потенциальным героем фильма, начал перечислять: народный депутат, член, председатель, я Мирзояна мысленно вычеркнул. И знакомиться с ним в гостиницу «Москва» пошел исключительно с целью найти повод отказаться от лестного предложения. Ну, не надо, не надо ловить меня на слове, за вас это уже сделал Станислав Ежи Лец, сказавший, что «безвыходным мы называем такое положение, простой и ясный выход из которого нам не нравится» – не любить начальство – это сколько угодно, а вот резко с ним ссориться ... Взять и отказаться и никуда не ходить – этого я себе позволить не мог. Мы с начальством жили по принципу: вы думайте, что хотите, я буду думать, что хочу, главное, чтоб мы этого друг другу не говорили вслух.

Кроме полулюкса, в котором мы встретились, никаких признаков начальственности я в Мирзояне не обнаружил, скорее наоборот – некоторую не то чтоб робость – настороженность. Скорее всего так: он для меня был кот в мешке, но и я для него – кот в мешке, причем московский, киношный, да еще с известной фамилией, – кроме очень глупых людей такое редко кто изначально ставит в заслугу детям знаменитостей.

В порядке обнюхивания я задал ему два вопроса, ответы на ко-торые я помню как вчера, а Эдвард Михайлович клянется, что не помнит вовсе.

Первый вопрос был про референтный круг. Что тогда был типичный фильм – портрет известного человека? Немножко творчества, немножко биографии и герой – глазами... вот это и есть референтный круг: кто достоин сказать в фильме слово о герое. За этим следили. В телевизионном кино хватало предусмотрительных редакторов, озабоченных поддержанием высокого статуса «национального достояния». Надо сказать, что и сами «достояния», кто застенчиво, а кто и бестрепетно фильтровали состав участников. Фильм о знаменитости был как королевский портрет в парадной мантии, где царит этикет и нет места непосредственности. Я спросил: «Чьи слова о себе вы хотели бы услышать в фильме?»

– Меня это совершенно не должно касаться, – сказал Мирзоян, – зачем мне это знать? Этот ответ мне понравился, но знаете... слова... Зато ответ на второй вопрос купил меня с потрохами, так что и фильм я снял, и дружил с Эдиком и его семейством много лет, и воспоминания вот пишу, и все это раз и навсегда купленный тем его ответом.

– Чего бы вам не хотелось в фильме о вас?

– Мне бы не хотелось стоять в нем на цыпочках, – ответил Мирзоян после некоторого размышления.

Прежде чем вернуться в жаркий Ереван 1983-го, раскрою один секрет: полулюкс был снят Мирзояном для встречи со знаменитым ортопедом Илизаровым, у которого в Кургане проходил практику его сын Арик и, как выяснилось в дальнейшем, Эдик испытывал неловкость, что я не так пойму показное роскошество полулюкса, но постеснялся мне об этом сказать.

А в съемках эти исходные определили буквально все: сценарий Мирзоян не читал, вопросов по фильму не задавал, сообщал: еду туда-то, встречаюсь с тем-то – вам нужно? Мы ехали и снимали или не ехали и снимали что-то еще с другими людьми, в другом месте, но что бы мы ни делали, мы оставались в кругу его душевной заботы. Это какое-то особое мирзояновское свойство – ненавязчивое присутствие в жизни чем-то дорогих ему людей. Я это точно знаю, ибо находился в поле его добра с тех пор и до самого конца.

Тем труднее было выполнить сверхзадачу, а то, что она верно угадана, подтверждали все: его друг Арно Бабаджанян; его мама Люся Богдановна; его жена Ляля, она же Елена Мамиконовна; его ученики, настоящие и бывшие; даже музыканты Квартета им.Комитаса, игравшие его музыку в его кино, все, кто по мере сил отнимал у него кусочки драгоценного времени, все в унисон вели тему героя, и только герою эти всеобщие сожаления были безразличны.

В председательском кабинете Союза композиторов Армении есть небольшая ниша – жертва архитектурного просчета. От кабинета она отгорожена книжной полкой. Вот в эту нишу мы и спрятались: оператор, камера и я, от любопытных взглядов нас прикрывало полупрозрачное зеркало, остальное кое-как задрапировали, добавили к люстре пару наших приборов и – да здравствует скрытая камера! – мы снимаем рабочий день председателя.

Кстати, для Мирзояна – то она опять не скрытая, он-то про камеру знает, но все-таки снимаем мы или камера выключена – это и ему неизвестно. Увидев дополнительный свет, кто-то из посетителей спросит «У тебя съемки?», Мирзоян махнет рукой, и человек, пришедший по делу, забывает про наши лампы, и наступает звездный час документалиста: работа в шапке-невидимке.

Войдя в кабинет, я начал с ниши, а надо бы – с рояля, который стоял в центре комнаты и тем решительно отличал этот от всех иных кабинетов руководителей творческих союзов, которые мне доводилось видеть. На этот рояль мы делали ставку, более того, мы даже вовлекли в нехитрый заговор секретаршу, договорившись, что когда спадет наплыв посетителей и звонителей, она на полчаса отсечет случайных визитеров и... ну почему бы человеку, у которого уже который день на наших глазах руки не доходят до музыки, не сесть в паузе за рояль и...

Полчаса истекали, а Мирзоян, забыв о нашем присутствии, мирно занимался какими-то бумажками, пару раз сам позвонил по телефону, и тут не выдержал наш оператор.

– Эдвард Михайлович, – раздалось из нашей ниши, – не могли бы вы снять трубки с обоих телефонов, подойти к роялю, открыть его и присесть?

– Я уже говорил, что такого рода наши просьбы в иных обстоятельствах Мирзояну не мешали, не помешали и тут: точно, как по отрепетированной мизансцене, Мирзоян подошел к инструменту, открыл клавиатуру, сел на прирояльную банкетку и на мгновение заскучал...

Вот скажите, вы любите жизнь? А что это значит в каждодневном вашем поведении, в быту? Как выражается? А Эдвард Михайлович Мирзоян любил жизнь в каждую отдельную ее минуту и умел получать удовольствие от всего, что делал: от облизывания ложки с медом до беседы с секретарем ЦК, от телефонного разговора и от того, что этот разговор закончился, от ... ну что мог сделать музыкант у открытого рояля? Получить удовольствие – и он таки заиграл. Никакого контракта с его предыдущим поведением тут не было, этот контраст по сути подстроили мы, ибо шли от банального. А он сам собой стал получать удовольствие от очередной минуты – на этот раз за роялем. Если бы ему в ту секунду большее удовольствие доставило бы стереть с рояля пыль – он стал бы ее стирать – и тоже получать от этого удовольствие. Но он заиграл, и то, что ему в эту секунду нравилось играть, передавалось зрителю, а уж то, что он играл хорошую музыку, было дополнительно, сверх программы. Не зря же он считался и был одним из самых замечательных композиторов своего народа, не бедного музыкальными талантами.

За традиционным кавказским столом есть, к сожалению, вымирающая, фигура тамады. Чем дальше на запад проникала эта традиция, тем более размытой стала эта функция на родине, на Кавказе. Мне кажется, она стала обесцениваться с тех пор, как за кавказскими столами стали пить водку. Ну, это так, к слову. А в начале восьмидесятых эта традиция еще была жива даже в больших городах, а не только в деревне. Мне повезло: я еще успел попить вина за большими столами, где требовалось немалое долготерпение, пока добрые слова обойдут за этим столом каждого. Но уже и за теми столами приходилось замечать, что тамада – тамадой, но за каждым, ну или почти за каждым столом бывал уважаемый, самый уважаемый человек, на которого нет-нет да оглядывался даже тамада. Поддерживая очередной тост, этот человек работает как гений ювелир, заставляя тост блеснуть неожиданной, неповторимой гранью.

Таков Мирзоян. В Армении мне это как-то не бросилось в глаза, там было понятно: уважаемый человек, большой начальник, знаменитый композитор – все в одном флаконе. Но когда он ухитрялся проделать этот кунштюк и за своим семейным столом, где человеку пора уже устать быть неожиданным, и за моим, где в последующие годы мы выпивали с Мирзояном почти в каждый его приезд, и за столом в галстуках, и за столом в шортах – Мирзоян, вставший с бокалом или с рюмкой, почти мгновенно собирал внимание даже там, где никто толком не знал, кто он такой. Пытаясь понять природу этого его замечательного свойства, я пришел все к той же удивительной его способности концентрировать радость жизни на происходящем здесь и сейчас. Вот он смотрит на человека, сидящего за столом, смотрит любовно и лукаво, и его любовь к жизни открывает ему что-то в этом человеке, невидимое другим, или невиденное им самим раньше, или и вовсе невиданное, и он обстоятельно, пробуя на язык каждое слово, говорит об этом и испытывает радость от своего открытия этого человека, радость за этого человека, которому так приятно это сказать, а заодно и от того, как хорошо все складывается, как славно он сам говорит и какой замечательный напиток мерцает в его рюмке, и еще от того, как вкусно будет сделать этот глоток.

Уже в конце перестройки я был в Ереване на конференции. Я теперь часто езжу по таким конференциям и не снимаю фильмов. Подозреваю, что от этого у меня испортился характер. Настолько, что я в тот приезд едва не поссорился с Эдиком.

Ни при знакомстве, ни по ходу совместной работы, ни во все годы дружбы не было у нас с Эдвардом Михайловичем идеологических споров, хотя Мирзоян был многолетним партийцем, а я пожизненно беспартийным, хотя он, безусловно, входил в армянский советский истеблишмент – некий слой, определяющий господствующие в обществе правила игры, а я – и то временно – приобщился к этой среде в годы перестройки, в начале ельцинского правления, т.е, «на волне демократизации» или же «когда из всех щелей полезли эти демократы» – это уж какая кому формулировка нравится. Я больше скажу: нас не развело даже то, что в общественной жизни я и такие же, как я, в каком то смысле вытеснили Эдика и таких, как он, с тех высот, где человек слышен, виден, заметен. Все это

8

Կոմիտասի թանգարան-ինստիտուտը նշում է հիմնադրման 10-ամյակը

1

Ազգային մշակութային երաժշտական կառևորագույն գիտական կենտրոնը Կոմիտասի թանգարան-ինստիտուտը հունվարի 29-ին, նշել է հիմնադրման 10-ամյակը: Մշակութային կառույցն նշանակալի ակտիվ գործունեություն է ծավալել այս բեղմնավոր տարիների ընթացքում Հայաստանում և արտերկրում՝ կազմակերպելով թանգարանային ցուցադրություններ, ինչպես նաև «Կոմիտաս» միջազգային գիտաժողով-փառատոնը, մշակութային տարբեր միջոցառումներ:

Կոմիտասի թանգարան-ինստիտուտի ժամանակավոր պաշտոնակատար տնօրեն Տաթևիկ Շախկուլյանը ներկայացրել է անցած 10 տարիների գործունեությունն ու թանգարանի հիմնական ձեռքբերումները:

Միջոցառմանը համերգային կատարումներով ելույթներ են ունեցել ՀՀ վաստակավոր արտիստ Հայկ Մելիքյանը և «Գեղարդ» երգեցիկ խումբը՝ գեղարվեստական ղեկավար Միեր Նավոյան և խմբավար՝ Անահիտ Պապայան:

Այս տարվա նրա ամենանշանակալի միջազգայնացման ձեռքբերումը հունվարի 16-ին էր, երբ թանգարան-ինստիտուտն արձանագրեց հետևյալ ուրախալի փաստը՝

Սլինա Փահլևանյան, Ալֆրեդ Քոչարյան, Արամ Սաթյան

ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործադիր խորհրդի միաձայն որոշմամբ Կոմիտաս Վարդապետի ստեղծագործությունների հավաքածուն Աշխարհի հիշողության միջազգային ռեգիստրում գրանցվելու մասին:

«Կոմիտասի ստեղծագործությունները ՅՈՒՆԵՍԿՕ-ի միջազգային ռեգիստրում գրանցումը շատ պարտավորեցնող է: Սա հնարավոր է եղել թանգարանի, ԿԳՄՍ նախարարության և ՍԳ նախարարության հետ 7-8 տարիների մեծ աշխատանքի և համագործակցության շնորհիվ»,- նշել է Կոմիտասի թանգարան-ինստիտուտի տնօրեն (այժմ նախկին) Նիկոլայ Կոստանդյանը: https://komitasmuseum.am/%d5%af%d5%b8%

Թանգարանը դարձել է սիրված վայր զբոսաշրջիկների՝ հատկապես սփյուռքահայերի համար: ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանն այցելել է Կոմիտասի թանգարան-ինստիտուտ՝ շնորհավորելու թանգարանի հիմնադրման 10-ամյա հոբելյանը՝ շնորհակալություն հայտնել թանգարանի անձնակազմին. 10-տարին թանգարանի գործունեության համար և որ քրտնաջան աշխատանքի շնորհիվ ունենք կայացած մշակութային կառույց: https://www.aravot.am/2025/01/30/1467601/

ԳՈՀԱՐ ՇԱԳՈՅԱՆ
«ԵՊԿ հրատարակչության» հիմնադիր-հրատարակիչ

ՀԱՅՈՑ ԱՅԲՈՒԲԵՆՆԵՐԸ

Քննության առնելով Հին աշխարհում գործածված գրային համակարգերը, «Հայոց Այբուբենները» անտիպ աշխատության մեջ ցույց եմ տալիս, որ մինչև Ս. Մեսրոպ Մաշտոցի կողմից այբուբենի գրանշանների հայտնաբերումը, ունեցել ենք ևս մի քանի այբուբեններ (նշանագիր և սեպագիր):

Ներկայացնում եմ մի հատված այդ աշխատությունից, որը նվիրված է հայոց առաջին՝ հիքսոսյան կոչվող այբուբենին: Հիքսոսյան այբուբենն այսօր համարվում է աշխարհի հնագույն այբուբենը, որից ծագել է փյունիկյան այբուբենը, իսկ վերջինից՝ աշխարհի բոլոր այբուբենները:

Հիքսոսյան այբուբենով արված արձանագրությունները հայտնի են մ.թ.ա. IX-XVIII դարերից: Քանի որ այդ այբուբենով արված արձանագրությունները հայտնաբերվել են դեպի Եգիպտոս հիքսոսների արշավանքի ճանապարհին կից (Սիրիա-Պաղեստին-Սինայ-Եգիպտոս), ապա այբուբենը նախապես կոչվեց հիքսոսյան:

Հիքսոսյան այբուբենի գրանշանները նշանագրեր են, որոնք նախապես գործածվել են որպես գաղափարագրեր: Աշխատանքում ցույց է տրվում, որ այս այբուբենի բոլոր



Նկարում հիքսոսյան այբուբենով արված արձանագրությունների գծանկարներ են

գրանշանների հնագույն նախօրինակները վերին հին քարի դարում փորագրված Սյունիքի ժայռապատկերներում են: Այսպիսով, Սյունիքի ժայռապատկերները ոչ միայն հնագույն գաղափարագիր գրային համակարգերի (շումերական նշանագրեր, եգիպտական հիերոգլիֆներ) նախամայրն է, այլ նաև աշխարհի այբուբենների նախամայրն է:

Սյունիքի ժայռապատկերներում առկա են նաև մեսրոպյան այբուբենի բոլոր գրանշանները:

Թեև այժմ առավել տարածված է այբուբենի պրոտոսինայական անվանումը, սակայն վերջին տարիներին հայտնվեցին հոդվածներ ու մենագրություններ, որոնցում այն հորջորջվում է քանանական կամ հին հրեական:

ՀԱՄԼԵՏ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
https://www.academia.edu/41951135/%D4%B1%D5%85%D4%B2%D5%88%D5%92%D4%B2%D4%B5%D5%86%D5%86%D4%B5%D5%90%D4%BB_%D4%BE%D4

Перпетуум Нобиле, или Непрерывность добра

7

было для Мирзояна – ерунда, потому что всегда был и остался истинным интеллигентом, то есть в моем представлении, человеком, чей гуманизм шире его собственных убеждений.

Камнем преткновения едва не стало сегодняшнее наше отношение к прошлому. Мы уже десяток лет жили в разных государствах, межгосударственные границы между нами крепли от бессмысленности и глупости политики по обе их стороны, и возникало обманчивое ощущение, что бессмысленность и глупость пришли к нам вместе с новой государственностью, как будто жизнь или история кому-нибудь дают льготу начать «с чистого листа», как будтоэту государственность создавали и создают новые, в пипетках выращенные люди. Идиотская иллюзия, что, возненавидев свое прошлое, человек становится свободен от него. Недостаток воображения или способности к самоанализу подпитывает иллюзию, что, скажем, оголтелость антикоммунизма и оголтелость приверженности к коммуноидеологии – взаимоисключающие понятия, хотя суть их не в направленности, а именно в оголтелости, то есть в тоталитарности сознания, делающей их похожими до неразличимости, как варежки с левой и правой руки, они начинают кое-как различаться только после длительной носки. Словом, что же такое наше совместное прошлое: ящик Пандоры или мешок волшебных сказок?

Мы заговорили с Эдиком об этом прошлом и споткнулись на самом простом: хороший – плохой.

– Бедный Демирчян, – говорил Эдвард Михайлович, у ко¬торого трогательная привычка вместо «покойный» говорить «бедный», – очень хороший человек.

Когда число таких хороших – бедных и пока еще, слава Богу, живых – начало угрожающе расти, включая каких-то министров, работников ЦК, словом, всех тех, кто в дни, когда мы снимали кино, оказывал ему помощь во всех его строительных начинаниях, включая и строительство Дилижана, который ко времени съемок уже был знаменитым Домом творчества композиторов, я, честное слово, в первый раз за наши почти двадцать лет знакомства, довольно резко его прервал и стал почти кричать, что в этом все и дело, что из-за такого отношения к прошлому, как к счастливому детству и романтической юности, мы никак не можем понять, кто мы и откуда, и почему с нами сегодня происходит то, что происходит, и что если бы те люди, о которых он тут восторженно вспоминает, делали бы что положено, так ему бы не приходилось делать многое из того, что он делал, а заодно еще и ходить по начальственным кабинетам, дипломатничать, лукавить, уговаривать и выпрашивать.

Видно и 18 лет спустя я все еще оставался режиссером того фильма, который мы назвали «Перпетуум мобиле, или Альбом для внучки», где перпетуум – была и сама каруселеобразная жизнь Мирзояна и его скрипичное сочинение, а альбом – сборник фортепианных пьес, над которыми он к тому времени трудился уже не первый год. А ведь Мирзоян уже не был ни депутатом, ни членом, ни руководителем, и пора было бы задуматься о другом объяснении вроде бы непридуманному, вроде бы из жизни явившемуся сценарному ходу. И взорвался-то я из сочувствия к очень дорогому мне человеку. А Эдвард Михайлович оторопело посмотрел на меня грустными глазами, на миг потерявшими привычное улыбчивое лукавство и промолчал. Мы промолчали остаток дороги до его дачи, где он, забыв о моем хамстве, снова стал по-хозяйски заботлив, рачителен и велеречив, и снова называл меня Аллешиинька, именно так через сдвоенное «л» и удлиненное «и». Мне было стыдно.

Мне и сейчас стыдно. Это и подтолкнуло меня написать эти заметки и признать, что я пытался навязать Мирзояну свою схему мира, свою формулу вечного и временного.

Ведь, в сущности, я хотел, чтобы он расписался в своей неправоте, совершенно не отдавая себе отчета, что и в минуту нашего разговора о прошлом Мирзоян ухитрялся любить эту минуту, получать удовольствие от процесса вспоминания, и тут не было места критическому анализу, ибо он противоречит любви. А потом, кто может поручиться, что люди, о которых с этой неприемлемой для меня любовью говорил Мирзоян, не становились лучше именно тогда, когда... или именно потому что... общались с Мирзояном?

Почему я этого не принял во внимание? Ведь сам я, общаясь с Мирзояном, точно становился лучше.

Посмотрев наше кино, Эдик, как всегда, был непредсказуем в своих оценках:

– Какая, слушай, молодец Людочка (так звали нашего звуко-оператора), как она эту мелодию записала, а я тогда поиграл ее и забыл...

Прозрачная, грустная фортепианная мелодия, которую под нашим общим нажимом сыграл в публичном одиночестве фильма Мирзоян, оказалась чистой импровизацией, он ее просто сочинил и только спустя год услышал.

Не надо в жизни стоять на цыпочках, ни ради чего. Лучше жизни не может быть ничто, даже музыка. Просто жизнь проходит, а музыка остается. Так что она не лучше, она просто долговечней хрупкой нашей жизни. И из этого каждый может сделать свои вы¬воды. Только не надо их друг другу навязывать. Так я понимал моего друга Эдварда Михайловича, которому я пытался сочувствовать много лет – до того самого мгновения, пока не понял, что я ему завидую.

Алексей Кириллович Симонов, российский кинорежиссер

(Симонов А.К., Частная коллекция., М.:Издательство АСТ: ОГИЗ., 2023)

«ԵՐԵՎԱՆՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

1

✔ Հունվարի 9-11-ը, Ժնևի և Լոզանի համալսարաններում Հայագիտության միջազգային ասոցիացիայի *(Association internationale des etudes armeniennes)* նախաձեռնությամբ կայացել է *«AIEA General Conference 2025»* համաժողովը: Ժնևի համալսարանի կազմակերպիչը Հայագիտության ֆակուլտետի նախագահ դոկտոր Վալենտինա Կալզոլարին է, իսկ Լոզանի համալսարանի ներկայացուցիչը՝ Ռոբեն Մեյերը:

Երաժշտությանը նվիրված սեսիային մասնակցել են ԵՊԿ պրոֆեսորները արվեստագիտության դոկտորներ՝ Լիլիթ Երնջակյանը, ով ներկայացրել է *«Interpretation of Armenian Musical Cultuer in Foreign Sources»* թեմայով զեկույցը, Միեր Նավոյանը՝ «Հայկական վերածննդի նախադրյալները քերականական մեկնություններում» և Աննա Արևշատյանը՝ *«Tigran Mansuryan's Modern Hymnography»* զեկույցներով:

✔ Հունվարի 29-ին, «Առնո Բաբաջանյան» համերգասրահում կայացավ պրոֆեսոր Արմեն Հարությունյանի ղեկավարած ԵՊԿ Լարային գործիքների ամբիոնի 2024-2025 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի հաշվետու համերգը՝ նվիրված ՀՀ Վաստակավոր արտիստ, ԵՊԿ պրոֆեսոր, ջութակահար-մանկավարժ Հենրիկ Սմբատյանի ծննդյան 90-ամյակին:

✔ Հունվարի 29-ին, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի գրադարանը համալրվեց 2024 թվականին հրատարակված «Մեր ժամանակին մեծ երաժիշտն ու նվիրյալ ազգասերը՝ Համբարձում Ք. Ճապուրյան» երկլեզու հուշամատյանը (խմբագիր Մեսրոպ Հայունի) և նոտաների ժողովածուն (Ռուբեն Ալթունյանի, Ստեփան Շաքարյանի գործերի պարտիտուրները և պարտիաները՝ ի հիշատակ Համբարձում Ճապուրյանի (1951-2022 թթ.): Կլարնետի և դուդուկի կանադաբնակ վարպետ Համբարձում Ճապուրյանի կրտսեր եղբայրը՝ Գրիգոր Ճապուրյանը նախաձեռնել է եղբոր հիշատակին նվիրված հրատարակությունը: Գիրքը հրատարակվել է Գրիգոր և Քրիսթին Ճապուրեանի մեկենասությամբ: Արվեստասեր մեկենաս Գրիգոր Ք.Ճապուրյանն իր առատաձեռն նվիրաբերումներով նպաստել է բազմաթիվ հեղինակների աշխատանքների հրատարակությանը: Հուշամատյան «Նկարագրանք», «Կյանք ու վաստակը՝ նկարատետրով» բաժինները եղբոր կյանքի ու գործունեության վկայությունների մեկտեղումն ու պահպանումն է:

Ա. Հովհաննիսյան, Մ. Հունանյան, Ն. Ոսկանյան, Վ. Հովհաննեսյան, Գ. Ճապուրեան, Ծ. Մովսիսյան, Ռ. Սմբատյան, Ռ. Ասատրյան, Դ. Ղազարյան, Գ. Նշանյան

Համբարձում Ք. Ճապուրյանը ծնվել է 1951 թվականին, Բեյրութում: 14 տարեկանից, երբ հայրը նվիրում է կլառնետ, սկսում է լրջորեն պարապել: Մինչև Մոնրեալի *McGill* համալսարանի երաժշտական դասընթացներն անցնելը մասնակցել է տարբեր փառատոների, համերգների: Նույն տարիներին սկսել է դուդուկ նվագել: Այդ շրջանում համերգներ է ունեցել հայ համայնքի ճանաչված երգիչների հետ, նրա կատարումները հնչել են բազմաթիվ պարախմբերի ելույթներին, համագործակցել է երգչախմբերի հետ: Համբարձում Ճապուրյանը ստեղծագործական կապեր է ունեցել Ռուբեն Ալթունյանի, Ստեփան Շաքարյանի, Արամ Սաթյանի, Ռոբերտ Ամիրխանյանի և դիրիժոր Ռուբեն Ասատրյանի հետ: Սկսած 1970-ականներից լույս են տեսել նրա չորս ձայնասկավառակները:

Պաշտոնական նվիրատվությանը Վոկալ-տեսական ֆակուլտետի դեկան, դիրիժոր Ռուբեն Ասատրյանը հայտնեց, որ Համբարձում Ճապուրյանի հետ նա ծանոթացել է 20 տարի առաջ՝ ռեկտոր Սերգեյ Սարաջյանի գլխավորած կոնսերվատորիայում. *«Երաժիշտը մի քանի տարի հյուրախաղերով գալիս էր Հայրենիք, կատարում էր հայ կոմպոզիտորների ստեղծագործությունները, հնչեցնում էր նաև հատուկ նրան նվիրված գործեր, ինչպես օրինակ՝ Արամ Սաթյանի «1915» դուդուկի և նվագախմբի համար ստեղծագործությունը»:* Ռուբեն Ասատրյանը հավելեց, որ հրատարակված ժողովածուն Ռուբեն Ալթունյանի և Ստեփան Շաքարյանի մշակումներն են, որոնցից 10 գործը կլարնետի և նվագախմբի, 4-ը՝ դուդուկի և նվագախմբի համար են:

Գրիգոր Ճապուրյանն ընդգծեց, որ բարի, ազգասեր, համախոհ եղբոր հետ նրանք ավելի շատ ընկերներ էին: 1975-1981 թթ. Գրիգոր Ճապուրյանը սովորել է Երևանում և Հայաստանի մասին անձամբ էր պատմում, այդ կերպ առանց երկիրը տեսնելու, միայն խոսքերով կապվում է Հայրենիքի հետ:

Դիրիժոր Ռուբեն Ասատրյանը տեղեկացրեց, որ տարբեր մտահղացումներ կան, օրինակ՝ ամբողջ ժողովածուն հնչելու է Վանաձորի Կամերային նվագախմբի և տեղի մենակատարների մասնակցությամբ, ապա՝ Երևանում, ապրիլի 4-ին: Նախատեսվում է ապրիլի 12-ին մեկնել Լիբանան և այլն:

Իր շնորհակալական խոսքում ռեկտորի պաշտոնակատար Ծովինար Մովսիսյանը հավելեց. *«Կարծում ենք՝ այսուհետ Երևանյան կոնսերվատորիայի հետ կարող է ավելի սերտ համագործակցություն լինել, իրականացնել համատեղ ծրագրեր, հատկապես, որ դիրիժոր Ռուբեն Ասատրյանի նման ակտիվ միջնորդ ունենք»:*

✔ Փետրվարի 19-ին՝ Գիրք նվիրելու օրը, Խաչատուր Աբովյանի տուն-թանգարանում Հովհաննես Թումանյանի

Զարուհի Մինասյան, Պավել Հայրիյան, Լիլիթ Եփրեմյան, Արևիկ Սրամբոլցյան, Էլեոնորա Հարությունյան, Լևոն Ալմասյան, Արման Գրիգորյան

տուն-թանգարանի հետ համատեղ նշվեց Ամենայն Հայոց բանաստեղծի ծննդյան տարեդարձը: Նորարաց ցուցասրահում կայացավ նոր ցուցադրության բացումը, ներկայացվեցին Աբովյանի «Վերք Հայաստանի» պատմավեպի թումանյանական գրադարանի եզակի նմուշները, Աբովյան-Թումանյան առնչությունները, հնչեցին հատվածներ պատմավեպից: Հանդիսությունն ավարտվեց Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ուսանողների համերգով, որը կազմակերպվել էր ԵՊԿ Միջառարկայական մասնագիտացման կենտրոնի նախաձեռնությամբ (ղեկավար՝ դոցենտ Լ. Եփրեմյան):

Մասնակցեցին Ակադեմիական երգեցողության և Մասնագիտական դաշնամուրի ամբիոնների սաները՝ Էլեոնորա Հարությունյանը, Պավել Հայրիյանը Լևոն Ալմասյանը, Արման Գրիգորյանը: Նվագակցեց բակալավրական կրթության դաշնամուրային բաժնի 4-րդ կուրսի ուսանող՝ Զարուհի Մինասյանը: Նրանք ներկայացրեցին հայ կոմպոզիտորների ստեղծագործությունների ընտրանի, այդ թվում՝ Կոմիտաս, Ա. Սպենդիարյան, Դ. Ղազարյան, Է. Աբրահամյան, Վ. Կոտոյան, Ա. Մայիլյան, Ա. Դոլուխանյան, Ե. Դանիելյան, Ա. Տիգրանյան:

✔ Փետրվարի 19-ին, ԵՊԿ 4-րդ հարկի դահլիճում Դաշնամուր մասնագիտացմամբ սովորող ուսանողներից մասնակցեցին իտալացի դաշնակահար Անտոնիո Չաչիոյի վարպետության դասին:

Անտոնիո Չաչիոյի վարպետության դասին

Տարբեր երկրների մշակույթների ու երաժշտական կրթական ավանդույթների հետ անմիջական հաղորդակցվելն իտալացի դաշնակահար Անտոնիո Չաչիոյի գործունեության առաջնային ձևերից է: Հայաստանի պետական կամերային նվագախմբի հրավերով համերգային ծրագրին մասնակցելուն զուգահեռ նա ցանկություն էր հայտնել հանդիպելու Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի ուսանող դաշնակահարների հետ:

Վարպետության դասին մասնակից մեր ուսանողների կատարումներն ու պատրաստվածությունը տպավորիչ անակնկալ էին՝ անսպասելի զարմացնելով հյուրին:

Անտոնիո Չաչիոյի հետ հանդիպման պատասխանատուն է՝ ԵՊԿ շրջանավարտ դաշնակահար Մարինա Գևորգյան:

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ

✔ Լարային գործիքների ամբիոնի պրոֆեսոր Արտաշես Մկրտչյանի մասնագիտական դասարանի ջութակահար Արույակ Արևշատյանը, հունվարի 6-ին, որպես *«AVIMC American Virtuoso International Music Competition 2024»* մրցույթի *«Solo violin»* անվանակարգի երրորդ մրցանակակիր համերգային ելույթ է ունեցել «Քարնեգի» համերգասրահում՝ կատարելով Էժեն Իզաիի երրորդ սոնատը մենանվագ ջութակի համար: *«AVIMC American Virtuoso International Music Competition 2024»*-ը երկու փուլով կազմակերպվող մրցույթ է: Առաջին փուլին ձայնագրությամբ ներկայացվել էր Նաթան Միլշտեյնի «Պագանինիանա»ն սոլո ջութակի համար, իսկ երկրորդ փուլին՝ Էժեն Իզաիի երկրորդ Սոնատը սոլո ջութակի համար և Էռնեստ Շոսոնի «Պոեմ»-ը, Op. 25:

✔ Մասնագիտական դաշնամուրի ամբիոնի պրոֆեսոր Վաղարշակ Հարությունյանի դասարանի 4-րդ կուրսի ուսանող Շուշան Արևշատյանը հունվարի 6-ին, որպես *«AVIMC American Virtuoso International Music Competition 2024»* մրցույթի *«Artist Group»* տարիքայի խմբի *«Solo piano»* անվանակարգի երրորդ մրցանակակիր բեմ է բարձրացել Վաշինգտոնի «Քարնեգի» համերգասրահում՝ մասնակցելով հաղթողների գալա համերգին, որտեղ կատարել է Ս. Պրոկոֆևի Դաշնամուրային 7-րդ Սոնատի երրորդ մասը՝ (*«Precipitato»*) և հեղինակային «Էքստազիս» մենանվագ դաշնամուրի համար պոեմը (գրված դասախոս Արամ Հովհաննիսյանի ղեկավարությամբ)՝ միաժամանակ ներկայանալով որպես հայ-ժամանակակից ստեղծագործական դպրոցի երիտասարդ անուն:

«AVIMC American Virtuoso International Music Competition 2024» մրցույթի առաջին փուլում ներկայացրել էր Լ. վ. Բեթհովենի դաշնամուրային 30-րդ Սոնատը, երկրորդ փուլում՝ Ա. Սկրյաբինի դաշնամուրային 5-րդ Սոնատն ու Ֆ. Շոպենի 10-րդ Էտյուդը, op. 25, սի-մինոր:

✔Փողային և հարվածային գործիքների ամբիոնի պրոֆեսոր Կյաչեսլավ Մանուչարյանի մասնագիտական դասարանի 4-րդ կուրսի ուսանող Վիգեն Դարբինյանը *«4-th Global Music Competition»*-ի պրոֆեսիոնալ խմբի «Փայտյա փողային» անվանակարգում նվաճել է առաջին մրցանակը, ինչպես նշված է Վկայականում, ի նշան անմնացորդ հանձնառության, եզակի տաղանդի, երաժշտության ոլորտում նշանակալի նվաճումների: Մրցանակակրի ղեկավարին տրվել է շնորհակալագիր՝ բացառիկ նվիրվածության և երաժշտական կրթության առաջընթացի համար: Վիգեն Դարբինյանը ներկայացրել է Ջոն Ուիլյամսի «Վիկտորի հեքիաթ» պիեսը «Տերմինալ» (ռեժիսոր՝ Սթիվեն Սփիլբերգ) կինոերաժշտությունից: Մրցույթի ամփոփումը և ելույթը կայացել է 2025 թ., հունվարի 11-ին, Նյու-Յորքի «Կարնեգի հոլլ» համերգասրահում:

✔ Ակադեմիական երգեցողության ամբիոնի դոցենտ Գևորգ Հակոբյանի մասնագիտական դասարանի 3-րդ կուրսի ուսանող Աննա Տեր-Հովհաննիսյանը 2024 թվականին դարձել է մի քանի միջազգային առցանց մրցույթների դափնեկիր:

Ամռանը 2-րդ մրցանակի է արժանացել *«SERVAAS»* և Նիդերլանդներում կազմակերպվող *«ROYAL MAAS»* միջազգային առցանց երաժշտական մրցույթներում:

Առաջին փուլին ներկայացվել էր Վ. Ա. Մոցարտի՝ *«Alleluia»*-ն, երկրորդ փուլին՝ Ն. Ռիմսկի-Կորսակովի Ձյունանուշի արիան համանուն օպերայից *(«С подружками по ягоду ходить»):*

Դեկտեմբերին դարձել է *«VIVALDI»* միջազգային երաժշտական առցանց մրցույթի 1-ին մրցանակիր, որտեղ նրան է շնորհվել *«Unique personality»* հատուկ մրցանակը: Ներկայացվել է Ժ. Օֆֆենբախի «Հոֆմանի հեքիաթները» օպերայից *(«Les oiseaux dans la charmille»)* Օլիմպիայի արիայի ձայնագրությունը:

Տարին ամփոփվել է դեկտեմբերի 17-ին արձանագրված հերթական հաջողությամբ. ստացել է 3-րդ մրցանակ Վարշավայում կազմակերպվող *«WORLD'S BEST MUSICIANS»* դասական երաժշտության միջազգային առցանց մրցույթում: Երկու փուլից բաղկացած մրցույթին ներկայացվել էին հետևյալ ձայնագրությունները. 1-ին փուլ՝ Ն. Ռիմսկի-Կորսակովի Ձյունանուշի արիան համանուն օպերայից *(«С подружками по ягоду ходить»),* 2-րդ փուլ՝ Օլիմպիայի արիան Ժ. Օֆֆենբախի «Հոֆմանի հեքիաթները» օպերայից *(«Les oiseaux dans la charmille»):*

«ԵՐԵՎԱՆՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ

✔ Կոնցերտմայստերական ամբիոնի դոցենտ (վարիչ) Զարուհի Ղազարյանի ղեկավարությամբ դաշնակահար Զարուհի Մինասյանը ՌԴ Մշակույթի նախարարության աջակցությամբ իրականացվող *«Возможности нации»* Կատարողական արվեստի Երկրորդ համառուսաստանյան առցանց մրցույթի «Կոնցերտմայստերական վարպետություն» անվանակարգում ստացել է երկրորդ մրցանակ: Մրցանակակրի ղեկավարին տրվել է շնորհակալագիր՝ դափնեկրին նախապատրաստելու համար: Կոնցերտմայստեր դաշնակահարը նվագակցել է մեներգչուհի Լուսինե Թադևոսյանին, երաժիշտները կատարել են Ալդոնայի արիան՝ Ամիլկարե Պոնկիելլիի «Լիտվացիները» օպերայից: Մրցույթի ամփոփումը կայացել է Ուֆա քաղաքում, դեկտեմբերի 23-25-ին:

✔ Փողային և հարվածային գործիքների ամբիոնի դասախոս Արայիկ Թանգյանի մասնագիտական դասարանի առաջին կուրսի ուսանող, գալարափողահար Մոնիկա Բաբուշկինան հաղթել է ՌԴ Մշակույթի նախարարության աջակցությամբ իրականացվող *«Возможности нации»* Կատարողական արվեստի Երկրորդ համառուսաստանյան մրցույթի «Պղնձյա փողային գործիքներ» անվանակարգում:

Մոնիկա Բաբուշկինան առաջին կարգի դիպլոմին արժանացել է՝ ներկայացնելով Ն. Ֆյոդորովի «Սկերցո»-յի ձայնագրությունը: Մրցանակակիր գալարափողահարի ղեկավարին տրվել է շնորհակալագիր՝ դափնեկրին նախապատրաստելու համար, իսկ նվագակցող Հեղինե Գրիգորյանը ստացել է «Լավագույն կոնցերտմայստեր» դիպլոմը: Մրցույթի ամփոփումը կայացել է Ուֆա քաղաքում, դեկտեմբերի 23-25-ը:

✔ Փողային և հարվածային գործիքների ամբիոնի պրոֆեսոր (վարիչ) Գայանե Մուրադյանի մասնագիտական դասարանի առաջին կուրսի ուսանող Սուսաննա Սարուխանյանը դարձել է ՌԴ Մշակույթի նախարարության աջակցությամբ իրականացվող *«Возможности нации»* Կատարողական արվեստի Երկրորդ համառուսաստանյան մրցույթի «Փայտյա փողայիններ» անվանակարգի հաղթող:

Սուսաննա Սարուխանյանը առաջին կարգի դիպլոմին արժանացել է՝ ներկայացնելով Շառլ-Մարի Վիդորի ֆլեյտայի և դաշնամուրի 1-ին Սյուիտի առաջին մասի ձայնագրությունը: Հաղթող ֆլեյտահարի ղեկավարին տրվել է շնորհակալագիր՝ դափնեկրին մրցույթի պատրաստելու համար, իսկ նվագակցող Լուսինե Կարապետյանը ստացել է «Լավագույն կոնցերտմայստեր» դիպլոմը: Մրցույթի ամփոփումը կայացել է Ուֆա քաղաքում, դեկտեմբերի 23-25-ին:

✔ Ակադեմիական երգեցողության ամբիոնի պրոֆեսոր Արնոլդ Քոչարյանի մասնագիտական դասարանի 3-րդ կուրսի ուսանող Լևոն Ալմասյանը դարձել է *«Nouvelles etoiles»* պատանի երաժիշտների 11-րդ միջազգային առցանց մրցույթի առաջին մրցանակակիր (Երգեցողություն անվանակարգում): Նա ներկայացրել է Սերգեյ Ռախմանինովի Ալեկոյի կավատինան համանուն օպերայից և Արմեն Տիգրանյանի Դավիթ Բեկի արիան համանուն օպերայից, նվագակցող Աննա Ջալլադյան:

✔ Գիտության, արվեստի և մշակույթի միջազգային ակադեմիայի կողմից «Վարդան Մամիկոնյան» Պատվո մեդալի և հավաստագրի են արժանացել նաև ԵՊԿ պրոֆեսորներ՝ կոմպոզիտոր **Նարինե Զարիֆյանը,** երգչուհի **Արմանուշ Հակոբյանը,** քանոնահարուհի **Ծովինար Հովհաննիսյանը,** դոցենտ՝ դիրիժոր **Ռուբեն Ասատրյանը** և «ԵՊԿ հրատարակչության» բաժնի վարիչ, երաժշտագետ **Գոհար Շագոյանը**:

Երաժշտական անցուդարձը ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղում

✔ Գյումրիում առաջին անգամ ցուցադրության են ներկայացվել հայ ազգային օպերայի հիմնադիր, կոմպոզիտոր և խմբավար Արմեն Տիգրանյանի ուշ խորհրդային շրջանի ցուցանմուշները: Ներկայացված հինգ տասնյակից ավելի նմուշներն Արմեն Տիգրանյանի անձնական իրերն են, որոնք «Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարանի հիմնական ցուցադրությունում չեն եղել:

Արմեն Տիգրանյանի ծննդյան 145-ամյակին նվիրված՝ «Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարանի կազմակերպած ցուցադրությանը, որը տեղի ունեցավ Գյումրիի պատմության թանգարանի ցուցասրահում, հանդես եկան ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղի լարային քառյակը, ինչպես նաև բուհի և Գյումրիի Ք.Կարա-Մուրզայի անվան պետական երաժշտական քոլեջի ուսանողները՝ Ա.Տիգրանյանի ստեղծագործությունների կատարումներով:

✔ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղի կամերային նվագախումբը 2023 թվականից համագործակցում է Դետմոլդի երաժշտական համալսարանի պրոֆեսոր, անվանի ջութակահար Արամ Բաղայանի հետ: Ստեղծագործական

Արամ Բաղայան

համագործակցության արդյունքում կայացան համերգներ, որոնք նվագախմբի մասնագիտական կատարողականության զգալի առաջընթաց ապահովեցին: Երաժիշտների խնդրանքով այժմ Ա.Բաղայանը նվագախմբի գեղարվեստական ղեկավարն է:

Արամ Բաղայանը Դետմոլդի (Գերմանիայի Դաշնություն) երաժշտական համալսարանի պրոֆեսոր է: Նա որպես հրավիրված պրոֆեսոր, մենակատար և կոնցերտմայստեր մասնակցել է մի շարք հայտնի փառատոների և հանդես է եկել հայտնի նվագախմբերում՝ *Pärnu Music Festival* (Պյարնու, Էստոնիա), *Palermo Classica* (Պալերմո, Իտալիա), *Liedfestspiele Engadin* (Էնգադին, Շվեյցարիա), *Les heures romantiques* (Ֆրանսիա), *Goppisberger Music Festival* (Վալիս, Շվեյցարիա): Արամ Բաղայանը հեղինակավոր միջազգային մրցույթների դափնեկիր է և համերգային ելույթներ է ունեցել այնպիսի նվագախմբերի հետ, ինչպիսիք են Բադեն-Բադենի ֆիլհարմոնիկ նվագախումբը (Գերմանիա), *Государственный губернаторский оркестр* (Սանկտ Պետերբուրգ, Ռուսաստան), *Charlemagne Orchestra* (Բրյուսել, Բելգիա), Խարկովի պետական սիմֆոնիկ նվագախումբը (Խարկով, Ուկրաինա), Դրիմի պետական սիմֆոնիկ նվագախումբը (Եվպատորիա, Յալթա, Սիմֆերոպոլ)

Ա.Բաղայանը ծնվել է 1984 թ. Երևանում: Ջութակ սկսել է նվագել 7 տարեկանից: Սովորել է Երևանի Պ. Չայկովսկու անվան միջնակարգ մասնագիտական երաժշտական դպրոցում: Այնուհետև կրթությունը շարունակել է Բրյուսելում՝ անվանի հայ ջութակահար Խաչատուր Ալմազյանի ղեկավարությամբ, միաժամանակ լինելով Բրյուսելի թագավորական կոնսերվատորիայի ուսանող *(Koninklijk Muziekconservatorium Brussel)*՝ Վալերի և Իգոր Օյստրախների դասարանում: 2004թ. հանդես է եկել որպես *Artist in Residence* Եղիսաբեթ թագուհու Կապելլայում, որտեղ ուսանել է Ավգուստին Դյումեին և Տատյանա Սամուելին:

Ա.Բաղայանն ուսումնառությունն ավարտել է Կարլսռուեյի պետական երաժշտական համալսարանում *(Staatliche Hochschule für Musik Karlsruhe)*՝ պրոֆեսոր Յոսեֆ Ռիսինի դասարանում:

Այժմ Ա.Բաղայանն ապրում և դասավանդում է Դետմոլդում: 2025թ. հունվարից նա նաև Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Գյումրիի մասնաճյուղի կամերային նվագախմբի գեղարվեստական ղեկավարն է:

✔Հունվարի 19-ին, Գյումրիի տեխնոլոգիական կենտրոնի դահլիճում հանդես եկավ ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղի կամերային նվագախումբը, մենակատար՝ Արամ Բաղայան: Ծրագրում ընդգրկված էին Ֆելիքս Մենդելսոնի՝ ջութակի և նվագախմբի Կոնցերտը, d-moll, Էդվարդ Էլգարի՝ Սերենադը լարայինների համար, Բենջամեն Բրիտտենի՝ «Հասարակ սիմֆոնիա»-ն, Աստոր Պիացոլայի՝ «Տարվա եղանակները Բուենոս Այրեսում» ստեղծագործությունը: Նվագախումբն արդեն երրորդ անգամ է համագործակցում Դետմոլդի (Գերմանիա) երաժշտական համալսարանի պրոֆեսոր, միջազգային մրցույթների դափնեկիր Արամ Բաղայանի հետ: Նա մեծ ոգեշնչումով է աշխատում գյումրեցի երիտասարդ երաժիշտների հետ ու հենց նրանց խնդրանքով էլ համաձայնել է դառնալ նվագախմբի գեղարվեստական ղեկավարը: Այս համերգն աչքի ընկավ ոչ միայն նվագախմբի կատարողական որակի բարձր մակարդակով, այլև փաստեց, որ անվանի երաժշտի հետ համագործակցությունը զարգացման նշանակալի հեռանկարներ է ձևավորել: Դրա վառ վկայությունը Դետմոլդի համալսարանի նվագախմբային ֆակուլտետի կողմից ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղի կամերային նվագախմբին ուղարկված հրավերն է՝ այս տարվա ապրիլի 17-ից՝ մայիսի 5-ը Գերմանիայում հանդես գալու, վարպետության դասեր անցնելու և համատեղ համերգաշարերով հանդես գալու նպատակով: Սա նաև միջբուհական համագործակցության արդյունավետ օրինակ է:

✔ Անվանի ջութակահար, ՀՀ վաստակավոր արտիստ, Մոսկվայի Պ. Չայկովսկու անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր Սուրեն Հախնազարյանը 2024 թ., դեկտեմբերի 26-ին, ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղում էր: Նա անցկացրեց վարպետության դաս ուսանողների հետ, զրուցեց ջութակի կատարողական արվեստի,

Սուրեն Հախնազարյանի վարպետության դասին

ջութակահարի տարբեր կարողությունների, տեխնիկական հմտությունների մասին: Հանդիպումը շատ արդյունավետ էր և հագեցած: Այս սպասված հանդիպումը տեղի ունեցավ ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղի լավ բարեկամ Նարեկացի արվեստի միության աջակցությամբ:

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ

ՀՀ Բարձրագույն որակավորման կոմիտեն դոցենտի գիտական կոչում է շնորհել Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Գյումրիի մասնաճյուղի Հայ ավանդական երաժշտության կատարողական արվեստի բաժնի դասախոս **Մարինե Ասատրյանին** և դաշնամուրային բաժնի դասախոս **Մարգարիտա Ղուկասյանին:**

Նյութը պատրաստեց՝ **ԱՐՄԻՆԵ ԱԹՈՅԱՆԸ**

ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Վկայական N 03Ա059505 տրված 7.04.2003թ.
ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐ՝ Կոմիտասի անվ. ԵՊԿ ՊՈԱԿ
© ՍԵՐԳԵՅ ՍԱՐԱՋՅԱՆ, © ԳՈՀԱՐ ՇԱԳՈՅԱՆ
Գլխավոր խմբագիր՝ ԱՐՄԻՆԵ ԱԹՈՅԱՆ
Թողարկման պատասխանատու՝ ԳՈՀԱՐ ՇԱԳՈՅԱՆ
Խմբագիրներ՝ ԳՈՀԱՐ ՇԱԳՈՅԱՆ (հայ. լեզու)
ՍՈՖԻԱ ԱԶՆԱՈՒՐՅԱՆ (ռուս. լեզու)
Գեղարվեստական խմբագիր՝
ԳՈՀԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Արտատպումը միայն «Երաժիշտ» ամսաթերթի գրավոր արտոնությամբ: Խմբագրությունը միշտ չէ, որ համամիտ է հեղինակների կարծիքներին կամ տեսակետներին:
Նյութերը չեն գրախոսվում և չեն վերադարձվում:

Գովազդի տեղադրման համար դիմել խմբագրություն նշված հասցեով.

Ծավալը 10 էջ: Ստորագրված է 25.02. 2025:
Գինը 200 դրամ: Տպաքանակը՝ 101:

Մեր կայքում տեղ գտած հրապարակումների հեղինակային իրավունքը պատկանում է բացառապես «Երաժիշտ» ամսաթերթի «ԵՊԿ հրատարակչությանը» (http://yksclibrary.am/ conservatory.am): Այլ ՋԼՄ-ներում սույն կայքի հրապարակումներից որևէ մեկը ամբողջական վերահրապարակելու համար անհրաժեշտ է «ԵՊԿ հրատարակչության» (http://yksclibrary.am/ conservatory.am) համաձայնությունը: Լրատվամիջոցները կարող են «Երաժիշտ» ամսաթերթից մեջբերումներ վերահրապարակել միմիայն հատվածաբար՝ պարտադիր օգտագործելով հիպերհղում:

0001, ք. Երևան, Մարկ Գրիգորյան 2
+374 10 52 39 93+118
+ 374 55 00 21 62
http://www.conservatory.am, http://yksclibrary.am/
E-mail: yerazhisht@gmail.com
https://www.facebook.com/Yerazhisht-newspaper-Yerevan-State-Conservatory-996490150508214/